

8(47.924)

U-44

内閣府は、令和元年4月1日付で、内閣府の組織改編に関する内閣府令を公布した。

BUSS 9616 UPPU No 3

57. Առաջնորդ

Հեղաստ 93ԱՀՀԵԿ

ՀԱ (ՀՅ)

Ա-44

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ԳՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՐԱՍՏԱՆԻ ՍԵՐԻԱ № 3

Արքային
Գլուխին
29/01
Եղիշեան

Էդ. Ա. Պ. Ա. Ա. Ա.

ՆԻԶԱՄԻ ԳՅԱՆՁԵՎԻ

102

1. Քաջութիւնի ձականացի
2. Խուռակութիւնը
3. Ճեղք և Անգամ է
4. Ճորժ Չեղացականի կրթութիւն
5. Խափառութեան համար

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ԳՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ

1948

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Դիտուրյունների Ակադեմիայի
Նախագահության կարգադրությամբ:
Հայկական ՍՍՌ ԳԱ. Գրեգորիենց Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆԻԶԱՄԻԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՔ

Սովետական Միության եղբայրական ժողովուրդները 1947
թվի սեպտեմբերին տոնեցին ազգբեշանական ժողովրդի հանձարեղ
բանաստեղծ Նիզամի Գյանչելիի ծննդյան ութարյուրամյակը, Նի-
զամին մեկն է անցյալի այս նշանավոր մարդկանցից, որոնք ի-
րենց ստեղծագործություններով նշանակալից ավանդ են թողել
համաշխարհային գրականության գանձարանում: Լինելով մեծ
տականդի տեր և կրելով իր ժամանակի առաջավոր գաղափար-
ները՝ Նիզամին իր գրական ժառանգությամբ կենդանի է մնացել
ոչ միայն ազգբեշանական ժողովրդի, այլև ամբողջ Արևելքի ժո-
ղովուրդների սրտում: Նրա ստեղծագործությունները վաղուց ար-
դեմ ժողովրդական լայն մասսաների սիրելի երկերն են դարձել ոչ
միայն իր հայրենիքում, այլև արևելյան շատ երկրներում (Ռուս-
իականաց, Տաջիկաստան, Իրան և այլն): Նրա երկերի հերոսները,
հատկապես Լեյլին ու Մեծնունը, որպես դժբախտ սիրահարների
կերպարներ, հանրածանոթ են արևելյան բոլոր ժողովուրդներին և
ամբողջ Արևելքում դարեւ շառունակ իրեւ համեմատությունների
ու բանաստեղծական պատկերների ազբյուր են հանդիսացել: Նրա
ստեղծագործությունների մեջ արտահայտված առաջավոր գաղա-
փարները, նրա ժողովրդական պատկերների ազբյուր ու հումանիզմը այսօր էլ
հեղինակի նկատմամբ հարազատ ու զերծ զգացումներ են զար-
թեցնում Սովետական Միության եղբայրական ժողովուրդների մեջ,
ժողովուրդներ, որոնք ըստ արժանավույն են գնահատում անցյալի
նշանավոր մարդկանց:

Նիզամիի ապրած ժամանակաշրջանի, այն է՝ տասներկուերորդ
դարի Ազրբեշանը, բնորոշվում է տնտեսական ու կուլտուրական
աննախանթաց վերելքով: Առանձնապես աշքի է ընկնում խոշոր
ֆեռատական քաղաքների հարգացումը, որոնք մեծ դեր են խա-
ղում երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքում: Թուրքուա-

ՅԱ. ԱՐԱՅԻ

НИЗАМИ ГЯНДЖЕВИ

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1948 г.

կան արևելագիտությունն այդ էպոխայի կուլտուրայի դարգացումը՝ ոչ միայն Աղբբեշանուամ, այլև Անդրբեշվասի մյուս ժողովուրդին մոտ, կապում է սելջուկների տիրապետության հետ Առանց նկատի առնելու Արևելքի ժողովուրդների, առանձնապես Անդրբեշվասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացումը, առանց հաշվառնելու այդ ժողովուրդների կյանքում կատարված ներքին տեղաշարժերը, բուժուական արևելագետները 11—12-րդ դարերի Աղբբեշանի տնտեսական ու կուտուրք-քաղաքական վերելքը զարգում են սելջուկներին: Մինչդեռ սելջուկները ի վիճակի շինուարդացնելու իրենց գրաված երկրների ոչ տնտեսությունը և ոչ է կուլտուրան հենց այն պարզ պատճառով, որ նրանք տնտեսական ու կուլտուրական զարգացմամբ շատ ու շատ ցածր էին կանգնած իրենց նվաճած ժողովուրդներից: 12-րդ դարում Աղբբեշանի տնտեսական ու կուլտուրական վերելքի զարգացման հիմքերը ոչ թե պետք է փնտրել սելջուկյան տիրապետության, այլ հենց իր իսկ՝ Աղբբեշանի պատճական զարգացման մեջ: Նախապես պետք է շնչառել, որ սելջուկները՝ տիրելով Աղբբեշանին, այնուամենանիվ վկայուացան իրենց ենթարկել երկրի տնտեսական կյանք՝ ամբողջությամբ վերցրած և, դրա շնորհիվ էլ, շկարողացան փոխել երկրի տնտեսական կերպարը: Այս իր հերթին արդյունք էր այն բանի, որ՝ ա) սելջուկյան լայնառարած տիրապետություններում անձնագիր սարան կենտրոնախույս ձգտումներ, և շուտով երևան եկան կիսանկախ կամ բոլորովին անկախ իշխանությունները, բ) Աղբբեշանի մի զգակի մասը՝ Եփրվանը, ամբողջ սելջուկյան քրջանում միայն մի կարճատև ժամանակ, այն է՝ սելջուկյան սովորան Մելիք-Շահ (1072—1092) օրոք ենթարկվեց սելջուկներին, և շիրվանշահները հարկատու եղան նրանց: Հենց այս հանգստամանքներն էլ կարևոր դեր խաղացին Աղբբեշանի տնտեսական ու կուլտուրական զարգացման տապահեցում: Տասներկուերրդ դարշհանդիսանուամ է Եփրվանի անցյալի պատմության ամենափայլաւ քրջաներից մեկը: Կարևական ու տնտեսական անկախությանը զարկ է տալիս Եփրվանի հետափա հղորացմանը, իսկ այդ լավագանց մեծ նշանակությունը է ունենում ամբողջ Աղբբեշանի համար Նույն տասներկուերրդ դարում (1136 թվին) սելջուկյան կարծանվող պետության քննարձակ տիրապետությունների մեջ բաքերացող անկախ իշխանությունների թվում կազմվում է նաև Հարու-

վաշին Աղբբեշանի աթարբեկությունը, որի մեջ մտնում է և Գյանցան: Մինչև 1152 թիվը հարավային Աղբբեշանի աթարբեկ Իղդիգի-զը հնթակա էր սելջուկյան գերագույն իշխանությանը, բայց սութան Մասուդի մահվանից հետո յուր աթարբեկությունը դարձեց անկախ ու ինքնուրույն իշխանություն: Ահա հենց այս երկու իշխանություններն էլ հանդիսա են գալիս իրեկ երկու հիմնական ֆեոդական կենտրոններ, որոնց շուրջը համախմբվում են երկրի ամբողջ ֆեոդալական ուժերը: Վերջապես, Աղբբեշանի կյանքում յափազանց նշանակալից դեր է խաղում Վրաստանի հետ կնքած դաշինքը շիրվանշահների կողմից: Երկու հարևան ժողովուրդները ոչ միայն միացյալ ուժերով կովում են թշնամիների դեմ, այլև և ունտեսական սերտ հարաբերություններով մեծապես նպաստում երկու երկրների տնտեսական ու կուլտուրական զարգացմանը:

Զափազանց կարևոր դեր է խաղացել Աղբբեշանի զարգացման գործում մի ուրիշ հանգամանք ևս: Տասը—տասներկուերրդ դարերը նշանավոր են Աղբբեշանի պատմության մեջ էթնիկական կազմի զգակի փոփոխություններով: Այդ դարերի ընթացքում Աղբբեշանի տերիտորիայում բնակություն են հաստատում օգուզների, կիւղակների, թորքմենների և այլ թրավեզու ցեղեր, որոնք և բազմի, կրոնի, ինչպես և սոցիալ-տնտեսական պայմանների որոշ գնդմանը նորության շնորհիվ հեշտությամբ ձուլվում են մինչև այդ Աղբբեշանում եղած թրավեզու ուրիշ ցեղերի հետ: Այս հանգամանքը մեծ դեր է խաղում աղբբեշանական ժողովրդի վերջնական կազմավորման պլուցեսում: Նաև՝ հենց տեսլի և եկվոր թրավեզու ցեղերի ունեցած գերազանցության շնորհիվ շուտով աղբբեշաններն ըստում է Աղբբեշանի ընդհանուր էթնիկական լեզուն: Խնդիրն արդեն ճիշտ կերպով նշել են սովորական արևելագետները, տասներկուերրդ դարում ոչ միայն ուժեղանում է աղբբեշանական ցեղերի միավորումը, այլև առավել հին ու բազմաթիվ ցեղային լեզուներին փոխարինում է կազմավորվող աղբբեշանական միայնական էթնիկական լեզուների լեզուն՝ ամբողջ Աղբբեշանի տերիտորիայում: Այդ, մյուս կողմից, նպաստեց նաև տեղական այլ ցեղերի ձուլմանը՝ աղբբեշանական ժողովրդին: Այս էթնիկական վերակազմակարումն էլ, առա, իր հերթին մեծապես ազդեց Աղբբեշանի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Առաջ եկած խոշոր ֆեոդալական քաղաքներն աստիճանաբար է՝ ավելի մեծ կշիռ են ստանում

երկրի կյանքում, իսկ այդ քաղաքներում կենտրոնացող բազմազգի արհեստավորական ու առևտրական տարրերը ոժգին թափով զարդացնում են արհեստագործությունն ու առևտուրը: Այդ է վկայում այս փաստը, որ հենց այդ ժամանակաշրջանում առանձնապես զարգանում են Գյանջային գուղգնթաց այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Նախիջևանը, Բալաբանը, Շամախին, Դերբենդը: Թեև այդ բոլոր քաղաքներն էլ ուղղակի կախման մեջ էին ֆեոդալ-տիրակալից, բայց և այնպես վաճառականական և արհեստավորական խամերն օգտվում էին ինքնավարության որոշ նղանակներով: Այս էպոխայում առհասարակ ուժեղանում է դասակարգացին պարբար ֆեոդալականության դեմ: Ռւշագրավ են առանձնապես արևելյան առևտավորների գաղտնի միությունները: Դրանք մի տեսակ ինքնապաշտպանության կազմակերպություններ էին, որոնց նպատակն էր պաշտպանել արհեստավորների շահերը և Շամախին շափ արգելք հանդիսանալ վերնախավի կողմից ծայրահեղ շափերի հասցված կեղեցմանը: Այդ բոլոր քաղաքների մեջ թե՛ տնտեսական և թե՛ կուլտուրական ասպարեզում առաջնակարգ տեղը գրավում էր Գյանջան: Այդանք է, որ առավել զարգացման են համառմատանի գուղգ ու առևտուրը, այս բանում անհրաժեշտ է նշել վայտառանի գերը, որ սերտ հարաբերությունների մեջ լինելով Գյանջայի հետ, անշուշտ, նպաստավոր գեր է խաղացել արհեստների և առևտուրի, և ընդհանրապես, քաղաքային կյանքի զարգացման գործում:

Քաղաքների զարգացմանը գուղգնթաց 12—13-րդ դարերում առանձնապես մեծ թափով է զարգանում նաև կուլտուրան: Քաղաքներում կենտրոնացած բազմազդի արհեստավորական-առևտրական խավերը մեծապես զարկ են տալիս քաղաքային կուլտուրալիքին: Հենց այդ խոհ արհեստավորների ձևորով կերպով ուսուցում են արվեստի այնպիսի հուշարձաններ, որոնք այդ դարաշրջանի պարծանքն են կազմում: Դրանց զարգացումն իր հերթում է նաև գիտության որոշ ճյուղերի՝ մաթեմատիկայի, բժշկության և այլն՝ զգայի առաջընթաց: Անշուշտ ինչպես ճարտարապետական կառուցումների ու մետաղադրամների պատրաստման գործության վերաբերի այսպիսի առևտուրի մասին, ինչպես մասին գաղաքական կառուցումների ու մետաղադրամների պատրաստման գործության վերաբերի այսպիսի առևտուրի մասին:

Կասի անտեսական ու կուլտուրական վերելքով, իսկ Սղբրեջանն արդ էպոխայում, ինչպես զիտենք, Անդրկովկասում նշանակալից գեր էր խաղում, մանավանդ արհեստագործության ու առևտուրավարելու գուղգում: Վերջապես, արհեստների ու կուլտուրայի ջարգացմանը զուգընթաց ճոխապես զարգանում է նաև Ազրբեջանի գրադարակի խոշոր բանաստեղծներ, ինչպիսիք են Աֆղալաղդին Խափանին (մեռել է մոտ 1197 թվին), Աբու-ն-Նիզամ Ֆեհմին (մոտ 1108—1146), Մուզքիր Բալյաքանին (մեռել է 1196 թվին) և, վերջապես, Նիզամին: Թեև այդ ժամանակաշրջանի ազրբեջանական գրականությունը տակավին հարկ եղածին շափ ուսումնասիրված է, և այդ բանն առաջմատ դժվարանում է աղբյուրների սակագության պատճառով, այնուամենայնիվ եղած ուսումնասիրությունը էլ լիովին հիմք են տալիս հաստատելու, որ 12-րդ դարը ազրբեջանական գրականության անցյալի պատմության մեջ հանդիսանում է ծաղկման շրջաններից մեկը, մի շրջան, որ պատկեց Նիզամիի անմահ ստեղծագործություններով:

ՆԻԶԱՄԻԻ ԿՑԱՆՔԻ

Իլլաս Բին-Յուսուփի Նիզամիին ծննդել է 1141 թվին, Գյանջայի քաղաքում, որի ամերակները գտնվում են այժմյան Կիրովարակից մի քանի կիլոմետր հոռավորության վրա՝ Գյանջա-շայի ափին: Նիզամի բանաստեղծի մականունն է (թախլուս), իսկ Գյանջեփիցույց է տալիս նրա ծննդավայրը: Ի դեպ, եվրոպական արևելական գետներից ոմանք, հենցկելով Նիզամիի վերջին ստեղծագործության՝ շեխանդար-Նամին մեջ եղած մի տողի վրա, որում հիշվում է Շամազարի անունը, կամեցել են Նիզամիի ծննդավայրը համարել Ռում քաղաքը (Թրանում): Սակայն ինչպես հենց եվրոպացի բոլորուական արևելագետներից ոմանք են ցույց տվել, այդ տողը հեղինակին շի պատկանում: Այդ բանը վերջանականապես ապացույնի կամեմատությունը՝ բազմաթիվ ձեռագրերի հայտնաբերությամբ, Աւատի և բոլորուական արևելագետների այդ պատուընը Նիզամիի ծննդավայրի մասին, հիմնովին սխալ է:

Նիզամիի կյանքի մասին եղած տեղեկությունները շափականց աղքատիկ են ու կցկոտուր: Եղած տեղեկություններն էլ, առանց աղքատիկ առևտուրի մասին գաղաքանական բանաստեղծի երկերից են քաղաքական գաղաքանական բանաստեղծի մասին, հիմնովին սխալ է:

պիտագծու վերաբերում են նրա ստեղծագործությունների տարեգրության ու նրանց հետ կապված որոշ հանգամանքների: Ուստի և կարդի է ասել, թե նրա կենսագրությունը, այն ձևով, ինչպես մինչև այժմ կատարված ուսումնասիրություններով ներկայացվում է, իր իշխ ստեղծագործությունների պատմությունն է, թեև, իհարդեմ, տառապին ոչ ամբողջական պատմությունը:

Թե ինչպիսի ընտանիքում է ծնվել նիզամին՝ հայտնի չէ. համեմայն զեպս ընդունված է, որ նա իր ծագմամբ կապված լի եղել ֆեռդաշական վերնախավի հետ. ավելի համանական է համարվում այն, որ նրա հայրը պատկանել է արհեստավորական խայմին: Ինչ էլ որ լինի, անկասկած է, որ ծնողները բավարար միշտներ ունեցել են, որ և հնարավորություն է տվել այն ժամանակամասը համար անհրաժեշտ կրթություն տալ զավակներին: Նիզամին՝ նիզամ Մութարրիզին՝ նույնպես եղել է բանտառեղծ, քայլ նա ընտրել է իր համար մի բոլորովին այլ ուղի, քան նիզամին. քառնարկվ պալատական բանաստեղծ՝ նա գրել է մեծ մասմբ քամիդներ՝ ի փառ փեղալ տերերի: Նրա ստեղծագործություններից չափազանց քիչ են հասել մեզ, և դրանք ել բազականաշափ ուսումնասիրված չեն, ուստի և դժվար է որևէ բան առել նրա բանաստեղծական ծիրքի մասին: Այնուամենայնիվ, վըստանորեն կարելի է ասել, որ նա առանձնապես մեծ հոչշակի չի տրժանացել, և ժամանակի բանաստեղծները ստվերի տակ են թողել նրանց:

Եղած ովյալները հնարավորություն չեն տալիս պարզեցու, թե նիզամին ե՞րբ է զրկվել ծնողներից: Հայտնի է, որ նա ամելի շուռ է դրկվել հորից. այդ հաստատվում է հենց բանաստեղծի այն քառարերավ, թե մանուկ հասակից իր կրթության հոգսը մոր վրա է մնացել Մոր Հոգատարության շնորհիվ նա ստացել է բազմակողման կրթություն: Նա լիովին տիրապետել է այն ժամանակված համապատասխան կրթություն: Նա լիովին տիրապետել է այն ժամանակված համապատասխան կրթություն: Ենթադրություն կա, որ իմացել է նաև հունարենի նա լուրացրել է ինչպես արաբական փիլիսոփայությունը (բնականարար՝ առավածաբանության հետ), այնպես էլ հունական կլասիկ փիլիսոփայությունը, հմուտ է եղել աստղաբաշխությանը, մաթեմատիկային, աշխարհագրությանը, իրավաբանությանը, բժշկու-

թյանը և այլն: Ուշագրավ է, որ նիզամին, թեև լավ գիտեր ալքիմիան, բայց խիստ կերպով ըննադատում է իր ժամանակի գիտության այդ հոչակիված ճյուղը և լի համարական նրան: Այսպիսով, նա ոչ միայն լիովին յուրացըրել էր իր ժամանակի առներող գիտությունը՝ յուր բոլոր ճյուղերով, այլև իր գիտական հայացքներով և առևտում էր ժամանակի առաջավոր մտքին: Նսկ այդ առաջամիջոր գաղափարները, ինչպես և գիտության մեջ ոչ սահմանափակվածությունն, այլ բազմակողմանիությունը, ինչպես հայտնի է, մերածնության դարաշրջանի բնորոշ երևույթներից են:

Ինչպես նիզամին ինքն է ասում, իրքն բանաստեղծ հոչակիվել է իր գաղելներով դեռևս վազ երիտասարդության տարիներում, մի քանի, որ նշանակում է, թե իր գիտական պարապմունքներին դուգությաց նա դեռ երիտասարդ հասակում զբաղվում էր արդեն պոեզիայով: Ցուր ընդարձակ գիտության ու բանաստեղծական տագանօդի շնորհիվ նիզամին անշուշտ կարող էր հեշտությամբ մուտք գործել որևէ իշխանի արքունիքը, որպես պալատական բանաստեղծ: Սակայն նա, շնայած իր հնարավորության, շի ընտրում ժամանակի բանաստեղծների մեծագույն մասի սովորական ուղին: Պետք է հիշել, որ իր ժամանակի բանաստեղծների ուղղակի երաժամկետներն էր դառնալ պալատական բանաստեղծ: Առանձնապես այն բանաստեղծները, որոնք շունեին որևէ արհեստ կամ եկամուտի որևէ մշտական ու ապահով աղբյուր, պալատում էին տեսնում ոչ միայն ստեղծագործելու, այլև ապրելու միակ հույսը: Դառնալով որևէ ֆեռդափի պալատական բանաստեղծը, այդ կարգի պոետները մի միանգամայն ապահովվում էին տնտեսական, հաճախ մեծամեծ պատրիվների արժանանում, բարձրաստիճան պաշտոններ ստանում՝ վայելելով տիրակալի շնորհները: Սակայն, ինչպես պարսիկ բանաստեղծ Սատիին է ասում, պալատական աշխատանքը երկու կողմ ունի «հացի հույս» և հոգու երկյուղը: Պալատական բանաստեղծի այդ «կսեմաշուր» վիճակը նախանձելի էր այնքան ժամանակ, քանի դեռ բանաստեղծը չէր ճաշակել այդ վիճակի բոլոր «վայելքները»: Դառնալով պալատական բանաստեղծ, այդպիսի պոետները կորցնում էին և իրենց անձնական աղատությունը, և ոտքագարծական աղատությունը: Նրանց վերուստ արդեն տրքում էր ստեղծագործությունների թեմատիկան՝ ներբողներով գովերգել «ուվանագործական» պարափակալից, կամ տարափակալից գաղելներ գործել,

որպեսզի յով խնջույքներում տիրակալի պալատական երդիները երգեն։ Ավելի վատթարը, սակայն, անձնական աղատության կորուսը և հոգվանափոր-տիրակալի զայրութի երկյուղն էր։ Պալատական բանաստեղծը ամեն բոլի կարող էր պատճել տիրակալի վերաբերմունքի փոփոխությանը, պալատական խարդախ միջավայրը և, առանձնապես, մրցակից բանաստեղծների մեքենայությունները լիովին հիմք էին տալիս այդպիսի երկյուղի։ Պալատական բանաստեղծը, զգուշության դեպքում, իր կամքով շնորհանդեպ պատճառը ու հեռանալ, այդ պատճառով էլ, նա, հլու իր վիճակին, մշտապես զգույշ պիտի լիներ՝ իր վրա շնորհանդեպու տիրոջ զայրութիւն իսկ հրավիրել իր վրա տիրակալի ցասումը, հաճախ նշանակում էր ոչ միայն զրկվել բոլոր շնորհներից և արտաքիւ պալատից, այլև գաժանորհն պատժվել Այդպիսի որախտի էր արժանացել, օրինակ, հոչակավոր պալատական բանաստեղծ և արքանին՝ հնդարկվելով բանաստեղծական, այդպիսի պատճի էր արժանացել Ֆելեքին՝ մենակուով բանուամ։ Ի դեպ, պալատական բանաստեղծների այդ վիճակը շափականց հետաքրքրական արտահայտություն է գտել նրանց ստեղծագործությունների մեջ։ Չափազանց բնորոշ է, որ իշխանների համար փասմափայլ ներբողներ գրող պալատական բանաստեղծները թողել են խորը վրշտով ու հոգետեսությամբ համակված եղերերգություններ (էլեգիաներ), որոնք անշուշտ գրված չեն եղել հրապարակային ընթերցանության համար։ Դրանց՝ այդ եզերերգությունների մեջ է, որ տարփակից գաղեների ու շուալլ զովասանցներով ճոխացած պերճարան ներբողների հեղինակներն արտահայտել են իրենց խոր վրշտերը, իրենց հիասթափությունը՝ պալատական կյանքից ու ձագել պալատական միջավայրը։ Հայտնի է, օրինակ, ներբողների մեծ վարպետ նույն Խաւեանի մի եղերերգությունների շշաբսիյան վերաբուլ, որի մեջ հեղինակը խոր կակիծով պատմում է իր կրած դառնությունները՝ պալատում։ Պալատական բանաստեղծի այս վիճակն էր, ահա, որ կարող էր ընտրել նիզամին և ուներ բոլոր տվյալները՝ դրան համար, բայց մինչև կյանքի վերջն էլ նա չի գիտում գեպի այդ ուղին և հեռու է մնում պալատներից։ Ենթադրել, թե նիզամին միանգամայն ապահովված էր տնտեսական և այդ պատճառով չի դիմել դեպի պալատ, սխալ կլիներ, որովհետև նենց իր ստեղծագործությունների մեջ նա շատ համախ է գտն-

շատվում յուր տնտեսական ծանր կացությունից։ Միանգամայն տրամաբանական և ընդունելի է այն տեսակետը, որ նիզամին ուղղակի համոզմունքով չի ձգտել պալատական բանաստեղծի վեհակին։ Նա չի հաշտվել այն մտքի հետ, թե մի կտոր հացի համար պետք է ենթարկվել բոնակելի ամեն մի քմահաճույքին։ Նա գտնում է, որ ավելի լավ է բավարարվել համեստ ապրուստով, քան թե դիմել բոնակալների «բարեհաճույքանը» և դառնալ նրանց ստրուկը։ Նա այն համոզմունքին է, որ չի կարելի հլությամբ կռն բոնությունը։

Ինչո՞ւ հանձնում ես հարվածի պարանոցդ հովորեն, ինչո՞ւ տանում են լուս ու մունջ՝ բռնությունը անօրեն, եղի՞ր դու փուշ, պահի՛ր մեջքիդ սլաքները սրասալր...

Բացի այդ, նա չի հավանում նաև պալատական բանաստեղծների ստեղծագործությունը։ Ցուր դժբահությունը թե՛ պալատական բանաստեղծների վիճակից, և թե՛ նրանց շինծու, անարվեստ ու մանավանդ, միայն առատ պարզների համար գրված փեռք ներբողների նկատմամբ, նա հիանալի կերպով արտահայտել է հետեւալ տողերում։

Քանի դեռ կա մի կտոր հաց և մի կում ջուր, Շերեփի պես ամեն անոթ մի՛ մտցնիր ձեռքդ իզուր։

Ապա

Նրա համար միայն հեշտ է բառերը դասավորել, Ով բավարպւմ է զատարկ բանաստեղծություններուն. Իսկ նա, ով թանկապին քար է պղկում ժայուից, Նա միայն ճիգով է գտնում իրեն հարկավոր խոսքը։

Վերջապես, կա նաև մի երկրորդ ենթադրություն՝ պալատական կյանքից նրա խոսափելու պատճառների մասին։ Աղբյուրների մեջ աղոս տեղեկություններ կան այն մասին, որ նիզամին կապեր է ունեցել արհեստավորական «Ախի» կազմակերպության հետ։ Դա աշխատանքային կոմունայի նման մի կազմակերպությունը։

Այսան էր, որի անդամները միացնուած էին իրենց վաստակը մի լնիքանուր գանձարանի մեջ, իրաւության դիրք ունեին թշբանավորների նկատմամբ և պարտավոր էին ապրել իրենց սեփական աշխատանքով, Ախինների հայացքների մեջ կային որոշ ընթանուր գծեր սուֆիական-պանթեստական կրոնափիլիստիացնեան հետ. բայց, միևնույն ժամանակ, շատ կարևոր հարցերում նրանք որոշակիորեն հակադրվում էին սուփիզմին: Դրանցից առանձնապես կարևոր է հիշել նրանց վերաբերմունքը բռնության նկատմամբ: Խնչես հայտնի է, սուփիններն ընդհանրապես չեղոք դիրք ունեին բռնությունների նկատմամբ. նրանք անտարբերություն էին քարոզում հավասարապես և շարի, և բարու նկատմամբ, և իրենց այդ անտարբերությունը հիմնավորում էին իրենց այն սկզբունքով, թե և շարիքը, և բարիքը կառարվում են իրեն թիւ աստվածային բացարձակ էության թելադրությամբ: Այսպիսով, ուսմինները ոչ միայն հաշտվում էին գոյություն ունեցող բռնությունների հետ, այլև ուղղակի արդարացնուած էին նրանց գոյությունը: Մինչդեռ Ախինները ճիշտ հակառակ դիրք էին բռնում. նրանք ընդունում էին աշխատավորների իրավունքների պաշտպանությունը մինչև իսկ գենքի միջոցով: Արաք պատմիլ Իրն-Բատուսան՝ նկարագրելով Ախինների կյանքն ու վարքը՝ ասում է, թե նրանք տարածված են բոլոր այն երկրներում, որտեղ թուրքական ժողովորդներ են ապրում. ամբողջ աշխարհում, — ըստ Իրն-Բատուսայի խոսքերի, — չեր կարելի գտնել ճանապարհորդների և բանվճերի նկատմամբ ավելի հոգատար մարդիկ, քան Ախիններն էին. Նրանք պատրաստ էին անմիջապես թոցնել կեղեքիշ գլուխը և պինքով պաշտպանել խեղճերին: Բռնության դեմ այսպիսի ակտիվ գործությունը Ախինների բնորոշ հատկություններից մեկն է: Թե նիդամին իրք պատկանել է Ախինների կազմակերպությանը, առայժմ նշած սակավ ու ազոտ ակնարկները հնարավորության շեն տալիս հաստատելու, բայց, եթե նա անձնապես շի էլ պատկանել այդ կազմակերպությանը, առաջ նրանց հայացքներից շատ բան է յուրացրել և արտահայտել իր ստեղծագործությունների մեջ: Այդ բանը մենք կտեսնենք շարադրանքին հետագա գլուխնեւում:

Ինչ էլ որ լինի, այդ պատճառներից որն էլ ընդունելու իրենք, — անշուշտ ավելի ճիշտ կլիներ երկուսն էլ միասին ընդունում:

նել, — վաստը մնում է այն, որ Նիդամին մինչև կյանքի վերջն է հեռու է մասցել պալատներից և ընտրել է իր աշխատանքով, թե՛ կարուության ու զրկանքների գործով, հաց վաստակելու ու առեղծագործելու ուղին՝ հավատարիմ մնալով իր այն արտահարական թյանը, թե՛

Աշխատանքի համար նոր մենք աշխարհ ենք, եվ ոչ դատարկ շատախոսության:

Ցուր առաջին պոեմը Նիդամին ավարտել է շուրջ 1176 թվական: Պոեմը կրում է «Գաղտնիքների գանձարան» (Մախան ուղ-ասությ): Վերնագիրը: Դա, ըստ կառուցվածքի, խորհուրդների ու խրատների մի գիրք է, բաղկացած բաններ գույններից, որոնք կոչվում են «զրուցյներ»: Դրանցից յուրաքանչյուրը մի պատվիրան է երկրի տիրակալներին՝ երկրի կառավարման մասին: Իրեւ իր խրատական մտքերի ապացուց կամ հիմնավորուած, նիդամին յուրաքանչյուր խրատի կամ պատվիրանի հետ պատմում է որևէ առանք, պատմության մեծ մասամբ նյութ քաղելով անցյալից, և դրանով իսկ Եղ ավելի համույթ դարձնում իր արտահայտած գաղափարները:

Համաձայն Արևելքում ընդունված գրական տրադիցիալին՝ նիդամին իր ստեղծագործությունն ուղարկում է ժամանակի տիրուկալներից մեկին, այն է՝ Էրզինջանի (Երզնկայի) մելիք Բանեւ-Մանգուչակ Ֆախրիդինի Բահրամշահին: Խնչես պատմում է մեղչուկյան պատմիչներից մեկը, մելիքը շատ է հավանել պոեմը և «վատահելի մարդու միջոցով մեծամեծ գանձեր է ուղարկել բանաստեղծին: Սակայն մի կողմից ոչ մի հիշաակություն վկենք» այդպիսի գանձի ստանալու մասին, մյուս կողմից նիդամին ակնարկներն այն մասին, որ իր ստեղծագործությունները թեև միշտ գովասանքի են արժանացել, բայց ըստ արժանվուց չեն վարձութրքել, արևելագետներին այն հավանական կարծիքն են թերեւ, որ եթե նույնիսկ Մելիքն իրոք ուղարկել է պարգևներ, ապա, օքուտահելի մարդը տեղ էլ հասցերեւ:

Իր առաջին պոեմի համար նիդամին վարձատրվեց մի ուրիշի՝ Դերբենդի տիրակալի կողմից. վերջինս իրու պարզ նրան ուշի՝ Դերբենդի տիրակալի կողմից տեղ էլ հասցերեւ:

1 Արևելագետներից սմանց կործիծով առաջին պահմական ավարտել է 1172—74 թվական:

Դաքիեց իր ստրկուհիներից մեկին՝ գեղեցկուհի Աֆակին։ Բանաւանդն ընդունեց այդ նվերը, բայց պահեց իր մոտ այլիս ոչ իբրև առքիուհի, այլ որպես իր օրինավոր կինը։ Թէ երր է տեղի ունեցել այդ ամուսնությունը, առայժմ ստույգ կերպով որոշված չէ։ Համեմայն դեպ այդ պետք է տեղի ունեցած լինի 1174 թվին կամ ավելի շատ։ Քանի որ 1174 թվին ծնվել է Նիզամիի միակ որդին՝ Մուհամեդը։ Սակայն ամուսնական հրջանիկ կյանքը Նիզամին վայելեց ոչ երկար ժամանակ։ Հավանաբար 1180 թվին, եթե ոչ ավելի շուտ, երբ նա աշխատում էր իր երկրորդ պոհմի՝ մեռուով ու Շիրինի՝ վրա, մահացավ նրա սիրեցյալ կինը։ Խորը վիշտը ցնցեց պոհտի ամբողջ էությունը, և նա յուր անսահման սերն իր կնոջ նկատմամբ տեղափոխեց յուր ստեղծագործության հերոսուհուն՝ Շիրինին։ Պետք է ասել, որ Նիզամին ընտանելիքն կշանքում ընդհանրապես դժբախտ է եղել։ Յուր առաջին կնոջը կորցնելուց հետո նա ամուսնացել է երկրորդ, ապա և երրորդ անգամ և միշտ էլ կարճ ժամանակից հետո կորցրել է կնոջը։ Նա ինքը յուր վերջին ստեղծագործության մեջ սուր կերպով նկատում է, թէ իր ստեղծագործությունների ավարտումը զուգադիպել է յուր կնոջ մահվան։

Տարօրինակ է իմ բախտը բառեր Հյուսենու մեջ. . .
... Երբ ես պատրաստում էի Շիրին-Հալվան,
Դատարկվեց իմ տունը նրանից, ով քաղցրավինի էր
պատրաստում։
Երբ իւլի-գանձի շուրջը պարիսպ էի կանգնեցնում,
Մի այլ գոհար ես պահ տվի այնտեղ,
Այժմ էլ, երբ Հարսանիքը¹ վերջին է հանգում,
Մի այլ հարս ես հանձնեցի Ռիզվանին².

Զրկվելով կնոջից՝ Նիզամին իր ամբողջ սերն ու գուրգուրանը քը կենտրոնացրեց որդու՝ Մուհամեդի վրա, որին և շուտով իր ընձերն ու խորհրդակիցը դարձեց։

Ավարտիվ հնորով ու Շիրինը՝ 1180 թվին, բանաստեղծն

ուղարկում է իլլիգիզիդ էմիր Զհան Փահլանին, որ հրամանում է հատուցել Նիզամիին արժանի պարգևով. բայց, ինչպես ցույց են՝ տալիս փաստերը, այդ կարգադրությունը պաշտոնիաների կողմից ի կատար չի ածվել։ Միայն էմիրի մահվանից հետո՝ 1186 թվին, նրա եղբայրը ու հաջորդ Կըզըլ Արպանը հիշեց բանաստեղծն և հատկացրեց նրան մի կիսավեր գյուղ, որ ավելի շատ ժամանակում էր պահանջում տիրողից, քան եկամուռ բերում։ Ուշագրավ է, որ այդ առթիվ ինքը Նիզամին էլ դառն հետանքով նկատում է, թե շահը զիտե, որ բանաստեղծը սակավապես է և ոչ խստապահանջ, ուստի և վարձատրել է նրան «իր պահանջմունքների համապատասխան»։ Տիրություն արել է Նիզամին այդ գյուղին, որ կոչվում էր Համբունիան, թե ոչ, և ո՞ր շափով նա եկամուռ է բերել բանաստեղծին, հայտնի չէ. այնուամենայնիվ, իր կուկ Նիզամիի հետագա ստեղծագործություններում ւրատհայտված տրումչը հաստատում է, որ դրանից հետո էլ նրա տնտեսական դրությունը չի բարելավվել։

«Խորով ու Շիրին» պոեմն ավելի մեծ ընդունելություն գտավ. Նիզամիի համբավը հոչակվեց ամբողջ երկրում։ Նվ, ահա, 1183 թվին Շամախու շիրվանշահ Ախսիթանը հատուկ սուրբհանգակի միշոցով պատմիրում է բանաստեղծին գրել իր համար մի նոր պոեմ և առաջարկում է նաև թեման, որ է արաբական ավանդությունը կելլի ու Մեծունի դժբախտ սիրո մասին։ Բանաստեղծը, որ նախակես չէր ախորդում այդ թեմայից, իր որդու հորդորանքներով հանձն է առնում պատվերը և ոչ ավելի քան շորս ամսում ավարտում յուր նոր ստեղծագործությունը, որ շուտով շտեմնված հոշակի է արժանանում ամբողջ մահմեդական Արևելքում։ Պոեմն աներեկայնի ժողովրդականություն ստացավ ոչ միայն Աղրբեջանում, այլև ամբողջ Առաջավոր Արևելքում և դարձավ հետապայի շատ ու շատ բանաստեղծների աղդեցության ու նմանության առջնակարգ պարյուներից մեկը։

1196 թվին Նիզամին նոր պատվեր է ատանում Մարտավայի տիրակալ Ըորիփա-Արշաւանից. վերջինս դիմում էր բանաստեղծին, որպեսզի մի նոր ստեղծագործությամբ անմահացնի նաև իր անունը։ Նիզամին այս անգամ էլ զիմեց պարսկական ժամանակադրությանը և իրեկ թեմա ընտրեց սասանյան Բահրամ Գուր արքայի պատմությունը, նույն թվի հուլիսին իսկ նա պարտեց, իր նոր

¹ Խոսրվ Հիւ-բանդար Նամեկի ժամին է։

² Դրախտի պահապան։

պահմը, որ կրում էր օթոթ գեղեցկուների (կամ՝ Յոթ պատկճը-ներ)՝ վերնագիրը:

Նիզամիի կյանքի հետագա տարիների մասին այլև տեղեկություններ չունենք: Օթոթ գեղեցկուներից» հետո նա գրել է իր վերջին պետք՝ «Խաքանդար-Նամեն» (Գիրք Ալեքսանդրի մասին): բայց թե երբ է ավարտել այն, հայտնի չէ: Բանաստեղծն ասում է, որ այդ ստեղծագործության վրա աշխատելու ժամանակ լրացել է որպու 17 տարին, որ Համբեկնում է 1191 թվին: բայց դա կարու էր աշխատանքի սկիզբը վիճել և, ամենայն հավանականությամբ՝ այդպես էլ է: Իսկ այդ նշանակում է, թե Նիզամին «Խաքանդար-Նամեն» վրա աշխատել սկսել է շատ ավելի վաղ, քան օթոթ գեղեցկուներին վրա:

Իր կյանքի վերջին տարիներում Նիզամին շատ ավելի ժանդ օրեր է ապրել. իր առանց այն էլ ոչ բարենպաստ տնտեսական կացությունն էլ ավելի ծանրացել է երկրաշարժի շնորհիվ, որի նկարագործությունը տալիս է նա իր վերջին ստեղծագործության մեջ: Իր կրած զրկանքների մասին բանաստեղծն առանձնապես շատ է գանգատվում վերջին պոեմում:

Ճշտված չեն նաև Նիզամիի մահվան թիվը: Առայժմ հավանական են Համարում, որ նա մեռել է 1203 թվին: Նիզամիի հայրենակիցները, որոնք, ի դիմու նրա, տեսնում էին իրենց իմաստում խորհրդատուին, օգնականին ու պաշտպանին, թաղել են նրան մեջ շուրջով: Նրա գերեզմանի վրա կանգնեցրել են արձան, որ կանգու է եղել մինչև 19-րդ դարի սկզբները: Ժողովրդի հիշողության մեջ Նիզամին մնացել է իրու ժողովրդի շահերի արդար պաշտպան: Իրքու սուրբ, և ժողովուրդը նրա զիրիմը դարձրած է եղել ուխտատեղի: Աղբեցանական ժողովուրդը այժմ նոր, հակայական հռչարձան է կանգնեցրել բանաստեղծի հայրենի քաղաքում՝ Կիրովագրում:

ՆԻԶԱՄԻԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Նիզամիի հիշալ հինգ պոեմները կազմում են մի ժողովածու որ կրում է «Խամսե» (Հնդյակ) ընդհանուր վերնագիրը: Բացի դրա մեջ հեղինակն իրեւ ժառանգություն է թողել նաև քնարական բանաստեղծությունների մի ժողովածու (Դիվան), որ, սակայն, մերողությամբ չի համել մեզ: Թեև Նիզամիի քնարական բանաստեղծությունները ևս, ինչպես կտեսնենք սոորու, գեղարվեստորեւ բարձրարժեք ստեղծագործություններ են, սակայն նա իր բանաստեղծական փառքը նվաճել է հիշալ հինգ պոեմներով: Այդ պատճենները Նիզամին ինքը չի միացրել մի ժողովածուի մեջ: արևելականները պարզել են, որ այդ կատարված է մոտավորապես տառերեքիցը դարում՝ անհայտ խմբագիր-արտագրողի կողմից: Վերջինս է պատկանում նաև «Խամսե» խորագիրը: Համենայն դեպք հինգ պոեմների մի ժողովածուի մեջ Խամսան պատճենը Արևելքի մահմեդական ժողովուրդների գրականության ըլլուրագործված տրադիցիաներից մեկը դարձավ Նիզամիի այդ ժողովածուի շնորհիվ: Ճիշտ է, հետագայում որոշ բանաստեղծներ՝ գործյալ այդ տրադիցիաներին հետևելով՝ մի ժողովածուի մեջ միացրել են ոչ թե հինգ, այլ յոթ պոեմներ (Յոթիյակ), սակայն այս առանձնապես հաջողություն չի ունեցել, և մինչև 18-րդ դարն էլ գերազանցապես տարածված է եղել հնդյակը:

Նիզամիի «Խամսե» մեջ պարունակվող այդ հինգ պոեմների միջև թե՛ սյուժենի, և թե՛ կառուցվածքի ու տաղաշափության տեսակենից որևէ ընդհանուր բան չկա: Ընդհակառակն, Նրանք իրարից շափազանց տարբեր են և թեմատիկայով, և՛ կառուցվածքով: Սակայն, նախքան այդ ստեղծագործությունների վերլուծության անցնելը, անհրաժեշտ ենք Համարում համառոտակի ծանոթացնել ընթրույնին նրանցից յուրաքանչյուրի բովանդակության հետ:

Գաղտնիների զանգարան:— Ինչպես ասել ենք, Նիզամիի առաջին ստեղծագործությունը կրում է դիվակիեկական քնությունը չունի թեմա, այլ բաղկացած է բանահինգ պատճեններից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է Նիզամիի «Հայացքները՝ կյանքի այս կամ այն երնույթի մասին և նրա խթաները այդ առթիվ: Ստեղծագործությունն սկսվում է ներածական գլուխներով՝ «Այս գիրքը կազմելու և նրա արժանիքների մա-

¹ Բնագրում վերնագրված է «Համբեկ ֆեյքար» պարունակեան փելքա բառը նշանակում է ե՛ պատկեր, ե՛ գեղեցկուներ: Եթես իմաստն էլ համապատասխանում են պոեմի բառնագույներներ: Համանական է, որ հենց այդ էլ նկատելունազն հեղինակն ընարել է այդ երկիմաստ բառը.

սին», «հոսքի առավելությունների մասին», «Դիմում աստծուն և այլն։ Ուշագրավ է, որ նույնին աստծուն դիմելիս ու նրան նկարագրելիս էլ Նիզամին արտահայտում է յուր քաղաքական հայտապները։ աստծուն նա չի ներկայացնում իրեւ վերացական, ինչ-որ մի բացարձակ է ուժում, այլ գնում է նրա մեջ մարդկային հաւելիանիշներ, և, որ առանձնապես կարևոր է, ներկայացնում է նրան իրեւ աշխատավորների պաշտպան։ Հենց այդտեղից էնելով էլ նա դանդատավում է աստծուն բռնականներից ու կեղեցիններից, առելով ոգնիր ինձ, չէ՞ որ մենք զուրկ ենք արդար գատավորից։ իմ դումեղ գանես, էլ ո՞ւմ դիմենք մենք... Կրօստիր (նրանց) վարձը, որովհետև նրանք շատ են պահանջում, որու վերցրու (նրանց) բաժինը, որովհետև նրանք կողապտիշներ են։ Այս ներածական, գուշակներին հաջորդում են բուն զրույցները, որոնք զանազան բովանդակություն ունեն։ Ամեն մի զրույցի մկրում, որպես մուտք, Նիզամին շարադրում է, իր սկզբունքները տվյալ զրույցի առանցքը կազմող երևույթի մասին, զրանով, կարծես, տեսականորեն նախապատրաստելով ընթերցողին, ապա պատմում է որևէ առակ կամ պատմվածք՝ արդ տեսական շարադրանքի ոգուն համապատասխան։ Գրի այսպիսի կառուցվածքը առիթ է տվյալ եվրոպական բուրժուական արևելագետներին այս ստեղծագործությունը համարելու գեղարվեստորեն թույլ գործ։ Սակայն այդ արևելագետներն իրենց այդպիսի գնահատականի համար շափանիշ են ընդունել բուրժուա-էսթետիկ ճաշակը։ Իրականում դա մի մեծարժեք ստեղծագործություն է և արժանի ավելի մեծ ուշագրության, քան այն, որին արժանացել է մինչև այժմ։ Ինչպէս, հենց այն հանգամանքը, որ նա չունի մի ընդհանուր թեմա, հայտնի շափով զգվածքացրել է բանաստեղծի գործը։ դրան ավելացել է նաև այն, որ նա իրեն նպատակ չի դրել այդ առաջին գրքում հյուսել սիրային ոռմանտիկական մի պատմություն, կամ մի դյուցազնվեալ նա այդ ստեղծագործությամբ կամեցել է գեղարվեստորեն արտահայտել իր փիլիսոփայական, բարոյագիտական հայացքները։ Ասկ այդ նշանակում է, որ ստեղծագործության ամբողջությունն ու միասնականությունը հիմնված է ոչ թե թեմայի, այլ այդ փիլիսոփայական-բարոյագիտական հայացքների ամբողջ սիստեմի վրա։ Հենց այս հանդամանքն էլ երկրորդ, ավելի լուրջ դժվարությունն էր հանդիսանամ։ Ենթա չէ բանաստեղծական խոսրով, շափածով առաջարկում է այսպիսի պատմում է, թե մի անգամ Սասանյան Խոսրով Անուշիրվան թագավորը որտորդությամբ

շարադրել մի ամբողջ փիլիսոփայություն։ Իսկ Նիզամին շափա-զանց գարանտորեն կարողացել է կատարել այդ հենց այս է, որ բուրժուական արևելագետները շնոր ուղում տեսնել Բացի գրանիք, բուրժուական արևելագետները փորձում են դարձյալ նսեմացնել այդ երկի արժեքը նաև բովանդակության տեսակետից։ Նրանք աշխատում են ցույց տալ, որ Շահադանիքների դանձարանը» միսթիկական ընույթ կրող երկ է, որ նրա մեջ արտահայտված փիլիսոփայությունը սովորական կրոնափիլիսոփայությունն է։ Բայց այս ձուեցումը միանգամայն սխալ է և ցայտուն կերպով ցույց է տալիս բուրժուական արևելագետների մի հայտնի տեսնդնցը։ Այդ արևելագետները շատ բանաստեղծների են հոչակել իրուն սովոր-բանաստեղծներ, կամենալով սքողներ, մթագնել նրանց ստեղծագործություններում արտահայտված առաջավոր գաղաքարները, կամենալով նրանց սոցիալական բողոքը «մեկնաբանել» իրեւ սուֆիական։ «Շահամարումն աշխարհիկ կյանքից»։ Այդպես են վարդել նրանք Օմար Խայամի քայլակների հետ, այդպես վարդել են Դայոնի դիմուլուատ, բանաստեղծ-պրոպագանիստ Նասիրի Խոս-տոմի-ստեղծագործությունների հետ, այդպես են վարդել նաև Նիզամիի այս պոեմի հետ։ Համարել այդ ստեղծագործությունը գեղարվեստորեն թույլ, իսկ բովանդակությամբ էլ միսթիկական և դրանով իսկ արժեքազրկել այն, թույլ շտալ, որ նրանում արտահայտված սոցիալական բողոքը հասնի մասսաներին, բողարեկել այդ բողոքը և մեկնաբանել այն սուֆիզմին հատուկ այլարանություններով, — առա բուրժուական արևելագետների նպատակը։ Մինչդեռ սովորական արևելագետությունը, որ, զինված մարքսինիսյան փիլիսոփայությամբ, կարողանում է ճշտորեն հասկանալ ու գնահատել երևույթները, ճիշտ կերպով հասկանում է Նիզամուն, վեր հանում այդ ստեղծագործության մեջ արտահայտված սոցիալական բողոքը և դրանով իսկ մերկացնում բուրժուական արևելագետության այդ հակագիտական մնասակար տեսնդնցը։ Որ Նիզամիի այդ ստեղծագործության մեջ հիմնականը հենց սոցիալական բողոքն է, բողոքը՝ կեղեցումների, բռնությանների ու շահագործման գեմ, կարելի է ցույց տալ մի քանի զրույցների հակիրճ բովանդակությունը շարադրելով։ Այսպես, «Նուշիրվանի և իր վեցըրի մասին» պատմվածքում հեղինակը պատմում է, թե մի անգամ Սասանյան Խոսրով Անուշիրվան թագավորը որտորդության

ժամանակ հեռացել էր թիկնապահ խմբից Նրան հետևում էր ծփաբն իր վեզիրը Իրենց ճանապարհին արքան ու վեզիրը հասնում են մի ավերված գյուղի Շուրջն ամեն ինչ դատարկ էր, ամենուրեք բարձրանում էին կործանված տների գիշատակները. Այս ո՞չ կյանք, ո՞չ մարդ Միայն մի կիսավեր պատի վրա նստած էին նրերու բու, որոնք ինչ որ բանի մասին ոգևորությամբ խոսում էին Բուերի բարձր ճիշը, որ լսվում էր այդ ավերակների միջից, առառառ ազդեց արքայի վրա և միաժամանակ շարժեց նրա հետաքրքրությունը: «Ճաշ» մասին են խոսում նրանք, — հարցուց արքան վեզիրին: Պարզվեց, որ նրանցից մեկն իր աղջկան կնուժիան է տալիս մյուսին և իբրև հատուցում նրանից պահանջում է արդ ավերված գյուղն ու շրջակայիր մի բանի այդպիսի գյուղերու Մյուսը պատահանում է, թէ ինքը հաճույքով կարող է տալ այդ ավերակները և ավելացնել դրան հարցուր հազարավոր այդպիսի ավերակները, որովհետև բանի գեռ կենդանի է Խոսրով Անուշիրվանը, ժողովուրդը կմաս թշվառության մեջ և շատ ու շատ գյուղեր դնու կալերվեն: Այդ խոսքերը խորապես ներգործում են Անուշիրվանի վրա, նա այնուհետև վերջ է տալիս բռնություններին և կառավարում է երկիրն արդարությամբ ու բարությամբ:

Երեթե նույնպիսի բովանդակություն ունի նաև «Սուվթան» Սանջարի և պառավի մասին» պատմվածքը, բայց սրա մեջ բողոքը բռնությունների ու կեղեցումների գեն արտահայտված է ավելի սուր կերպով նիզամին պատմում է, որ մի պառավ կին զալիս է սելչուկյան սովորան Սանջարի մոտ և նրան բողոքում իրեն հացրած տանջանքների ու նեղությունների մասին: Ամրող պատմվածքը, բացառությամբ մի բանի երկտողից, պարունակում է սովթանի ու նրա պաշտոներթյան անիրավությունների, կեղծությունների ու բռնությունների թվարկումը, որ առանց վախճառչության առջև կառավարում է պառավը:

Ես, — ասում է պառավը սովթանին, — քո մեջ չեմ տեսնում արդարաբատության պատճեռ ևս չեմ տեսնում կեղեքան վերջը, Թագավորը պետք է ժողովրդին ապավեն լինի, իսկ ուր գողի պես կեղեցում ես ժողովրդին:

Դու ատրուկ ես, թեկուզ և արքայական զգեստ ես հագնէ, Բնակավոր ես դու, որ վնաս ես հասցնում ժողովրդին: Դու թեև տակնուվրա ես արել աշխարհը, Բայց ի՞նչ հերոսությամբ ես աշքի ընկել դու...

Զարդացած պառավը հիշում է սովթանի բոլոր շարագործությունները և խորհուրդ է տալիս նրան հրաժարվել քռնությունները ու կառավարի երկիրը արդարությամբ: Բայց՝

Խորասանի տիրակալ Սանջարը շանսաց նյոյ ֆաստուն խոսքերին և կորցրեց երկիրը: Նաև այժմ երկրի վրա արդարություն չկա, Որոնիր այն միայն Սիմուրգի³ թևի վրա: Նվազություն է մոռացված կապույտ երկնի տակ, Նվազատիեր՝ որպես ծուխ՝ այս հողագնդի վրա: Վեր կաց, Նիզամի, և լացի՛ր ամոթից, Արյուն բացի՛ր նրանց վրա, ում համար արյունը շուր է:

Այսպես է հպատակում հեղինակը այդ պատմվածքը:

Մի երրորդ պատմվածքի՝ «Թոնակալ թագավորի և արգար նկատվորի մասին» պատմվածքի մեջ հետևյալն է պատմում: Հաշուած անտուով մի թագավոր կար, որ բռնությամբ նեղում էր ժողովրդին ու կեղեցուած անսանձ: Մի օր գալիս է նրա մոտ մի մարդ, որն իմանում էր ամեն գաղտնիք, և հայտնում, թե այսինչ ճնշավորը թագավորին բռնակալ է անվանել: Թագավորն անմիջապես հրամարում է կանչել ճնշավորին: Դահիճը պատրաստություն է անմուռ նրան գլխատելու: Դալիս է ճնշավորը: Թագավորը նրան հարցնում է, թե ճիշտ է արդյոք, որ նա իրեն բռնակալ է անվա-

նել:

«Եսեկ եմ, որ գու ինձ դև ես ասել,

Հաստատեն ես, որ անմեղներին սպանել եմ: — ասում է Թագավորը:

* Առաջինական թուառն.

Դու պիտիս, որ իմ թագավորությունը նման է Առղամոնի
թագավորությունը,

Խաչու ուրեմն ինձ գր-բռնակալ են կոչումն»

Սերուկն առանց երկյուղ կրելու հաստատում է, որ իրաք ինքը
կոչեք է նրան բռնակալ, և այդ՝ այդպես է.

... Ես չեմ քեզ.

Ես ավելին եմ ասել, քան արդ խոսքերը:

Դու ամոթ շունես փոքրերի ու մեծերի առջեւ,

Դու կողոպտում են գյուղերը, կեղեքում բազաթենք:

Ես նա եմ, որ հաշվել է քո շարիքները,

Զարի ու բարու մեջ քո հայելին եմ եղել:

Դու նրա (հայելու) մեջ անդրադարձել են աշնաբես,

Թիշամաւ կառ.

Զարդել այդ հայելին, մեծ պատիկ չեւ:

Ես արդար եմ, հասկացի՞ր իմ խոսքերի ճշտությունը,

Իսկ թե կախել ես ուզում, ես պատրաստ եմ ձահգանու:

Բռնակալ թագավորը հասկանում է ճգնաժորի խոսքերի ձրչ-
մարտությունը և հրամայում է մեծամեծ պատիվների արժանացը-
նել նրան՝ գլխատելու փոխարքն, իսկ ինքը աճուհետ կառավա-
րում է երկիրը արդարությամբ:

Կարելի է դարձյալ պատմվածքներ մեջ բերել, որոնց մեջ ՆՓ-
Պարմին սուր կերպով քննադատում է տիրող անաբարությունները,
բայց մենք բավականանում ենք այսքանով:

Եթե մի կողմից հեղինակը քննադատում է բռնակազներին,
մերկացնում նրանց բռնություններն ու անաբարությունները, ա-
պա, մյուս կողմից, նա հակադրում է դրանց իրենց աշխատանքում
ապրող մարդկանց: Այսպես, օրինակ, «Երկրագործի և Սուլեյմանի
Շասին» պատմվածքում նա պատմում է, թե մի օր Սուլեյմանը
(Սողոմոնը) դաշտում տեսնում է մի ժերունի հողագործի, որ իր
տնից մի բուռ ցորեն հավաքած ցանում է հողում: Սովորությունը
թոշնի բերանով հարցնում է նրան, թե ինչո՞ւ է ցորենը ցանում
աշնաբի հողում, որտեղ ցուր չկա: Մերումին պատասխանում է, թե
ինքը հողից ու ցրից օգնություն չի խնդրում, իր ջուրը՝ իր քըր-
տինքն է: «Ես չեմ մտածում թագավորության և իշխանության մա-

սին, — ասում է նա, — քանի կենդանի եմ, բավական է ինձ այս
շանքը»:

Նույնպիսի բովանդակություն ունի նաև «Մեր աղլուսագործի
Ժաման» պատմվածքը. մեկը հանդիմանում է աղլուսագործին այս
քանի համար, որ նա անարգ աշխատանքով է զրաղվում, ամբողջ
որը գործ ունի միայն ցեխի հետ: Աղլուսագործը պատասխանում է,
թե ինքը հպարտ է նրանով, որ իր աշխատանքով է ապրում. «Ես
նրա համար եմ աշխատանքին մեկնում ձեռփերս, որպեսզի ձեռքս
բեր շկարկառեմ ողորմության համար:

Վերը հիշված պատմվածքները բավական են արդին համոզ-
վելու համար, թե «Գաղտնիքների գանձարանը» մի միստիկ-սու-
ֆիզական երկ չէ: Նրա մեջ հեղինակը շատ որոշակի և գործնական
նպատակ է դրել. ցոյց տալով տիրակալների բանություններն ու
անիրավությունները և հակագրելով դրանց արդարությունն ու բա-
րությունը՝ խրատել հենց իր իսկ ժամանակի տիրակալներին:
Այս նպատակին հետաձուս լինելով էլ՝ նա անողոք կերպով մեր-
կացնում է հասարակական կյանքի շարիքները, անխնա կերպով
ձաղկում անցյալի և իր ժամանակի թագավորներին՝ անունն կա-
տայականությունների ու կեղեքման համար: Այս է, առա, «Գաղտ-
նիքների գանձարանի» արժանիքը, որ չեն ուզում տեսնել բուրժու-
ական էսթետները և ոչ միայն չեն ուզում տեսնել, այլև աշխա-
տում են բողաբեկը:

Այսպիսով «Գաղտնիքների գանձարանը» մի մեծարժեք գե-
ղարվեստական երկ է, որի հիմնական արժանիքը հենց այն բնա-
դատական ոգին է, որով դիտում ու պատկերում է իրականությունը: Նրա
գեղարվեստական արժանիքն մեծապես նպաստում են
լիզի հարստությունն ու պատկերների նոխությունը: Անշուշտ, ե-
թե այդ ստեղծագործության լիզուն համեմատնեք, օրինակ, «Խո-
ռով ու Շիրինի» լիզի հետ, ապա՝ կնկատենք որոշ բարդություն,
խրթին բառերի գործածություն և համեմատությունների որոշ վի-
րացականություն: Բայց այդ արդյունք է հենց ստեղծագործու-
թյան բնույթի: Խաչ խոսք, որ փիլիսոփայական դատողությունները,
խռիերն ու գաղափարները շափածո խոսքի ենթարկելու այնքան է,
հեշտ բան չէ. ինչպես կարելի է այդ դիտակտիկական ստեղծա-
գործության արժանիքը գնահատել սիրային-ոռոմանտիկական վի-
պի շափանիշով: Հենց միայն փիլիսոփայական բազմաթիկ տեք-

սինները բավական են, որ երկի լեզուն գեղարգեստական պարզ քրական լեզվից վերածվի բարդ, դժվար հասկանալի բառերով ու պատկերներով ծանրաբեռնված լեզվից թայց դա տվյալ դեպքում չի կարերի դիտել իրեն բացասական մի բան. դա բխում է հենց երկի ոգուց և, հետևաբար, տվյալ դեպքում նպաստավոր հանգա- ժանը է, որովհետև պայմանավորված է երկի բովանդակությամբ:

Խոսրվ ու Երին. — Այս սրումն, ինչպես ամեն ենք, սիրային- ու ուժանտիկական միաբերդ է. նրա նյութը բաղված է Երինի պատ- մությունից, իրեն աղբյուր Նիդամին անշուշտ առաջին հերթին օգտագործել է պարսից թագավորների ժամանակագրությունը, թայց մեծ շափով նյութ է բաղել նաև ժողովրդական ավանդու- թյուններից, հատկանի մասրի Երին ու Բիսութուածից (Երի- նի և Բիսութուածի պատմությունը): Վիապերդի համառոտ բովանդա- կությունը հետևալին է:

Սասանյան Հորմուզ (Որմիզդ) արքան ունենում է մի տղա՝ Խոսրովին, որ պատմության մեջ հայտնի է Խոսրով Փարմիզ անու- նում: Հայրը անսահմանորեն սիրում է որդուն և, շնորհելով նրան ոչինչ, միաժամանակ ամեն ջանք գործադրում է որդուն արդարու- թյան ու բարության ոգով դաստիարակելու համար: Նա նույնիսկ խստորեն պատճում է որդուն՝ զյուղացիների նկատմամբ թույ տվյած անիրավության համար:

Երիտասարդ արքայազնի շքախմբի մեջ էր մեծարվեստ նկա- րից Հափուրը, որ մի աշխարհ տեսած մարդ էր և շատ հետաքրքիր պատմություններ էր պատճում իր տիրոջը: Մի անգամ էլ նա պատճում է, թե Կասպիական ծովափի լեռնատառնում կա մի թա- դունի, որի անունն է Շամիրա, թայց հպատակները կոչում են նը- րան Միհին-բանու (Մեծ տիկին): Նրա մոտ է լինում իր ազգակա- նունի Երինը, որի նման գեղեցկունի աշխարհում չկա: Երիտա- սարդ արքայազնի սրտում այդ պատմությունը խոր արմատներ է ծագում և նա թախծում է Երինի մասին: Ի վերջո, նա հանձնարա- բում է Հափուրին՝ գնալ Հայաստան, գտնել Երինին և բերել նը- րան: Այդ դժվար գործը կատարելու համար Հափուրը հովազ դր- եռում է իր արվեստի վրա և դիմում է դեպի Հայաստան: Նա նկա- րում է Խոսրովի պատկերը յուր արվեստի ամբողջ վարդետու- թյամբ: Հայաստանում իմանալով, թե որտեղ է գտնվում Երինը առ պահին, գտում է նրա զբոսավայրը և նետում է Խոսրովի

ու ուկերը Երինի առջև նկարը ցանկալի ազդեցություն է ունե- նալ օրիորդի վրա. դրանից քաշալերված Հափուրը թուլտառ- թյուն է խնդրում օրիորդից՝ նրա մոտ գնալու: Գնալով նրա մոտ՝ Նա պատճում է Խոսրովի սիրը ու տառապանքների մասին: Երի- նը նույնական վառվում է սիրով և, առանց այլև ժամանակ կորց- ներու, իր արագավագ նարդիգ ծին նստած՝ սրանում դեպի Երան:

Այդ միջոցին, Խոսրովի թշնամիները կարողացել էին նրա հո- րը ամ աստիճան գրգռել որդու գեմ: որ արքայազնն ստիպված էր փախուստի դիմել՝ հոր զայրութից ազատվելու համար: Նա էլ ոքում է դեպի Հայաստան: Ճանապարհին նա հանդիպում է մի ողբյուրի, հենց այն ժամանակ, երբ շոգից տանջված Երինը՝ ճա- նապարհորդի շապասելով՝ ըղանում էր նրա մեջ Խոսրովը ց ճա- նաշում իր սիրածին, որի դեմքը ծածկված էր արձակած մազերով: Երինը նույնական չի ճանաչում Խոսրովին, թայց հմայվում է նրա գծշեցկությամբ, թեև նա դատապարտում է իրեն ու զարմանում, թե ինչպես միաժամանակ ինըը կարող է սիրել երկու տղամարդուն: Այդպիս էլ նրանք, առանց իրար ճանաչելու, հեռանում են միմյան- ցից:

Հասնելով Մեդախին՝ Խոսրովի հայրենի բաղաքը՝ Երինը տե- ղեկանում է, որ Խոսրովն ալսածեղ է, թայց քանի որ Խոսրովը մեկնելուց առաջ հրամայել էր իր ստրկումներին պահել Երինին իրենց մոտ, Երինը համաձայնում է դրան և մուռա այնտեղ:

Խոսրովը հասնում է Հայաստան և լավ ընդունելություն է դրսում Երինի անհետացումից վշտացած Միհին-Բանուի մոտ: Ներքինս առաջարկում է Խոսրովին ձմեռն անցկացնել իր մոտ՝ Թիրուա մայրաքաղաքում:

Հայրենիքից հեռու՝ ստրկումների ընկերակցությամբ Երինը երկար ժամանակ լի կարողանում ապրել: շուտով նա ձանձրութիւն է զգում: դրան ավելանում է նաև այն, որ Մեդախինի կլիման նույն- պես խասակար է ազգում նրա առողջության վրա: Նա պահան- ջում է կառուցել իր համար մի ամրոց լեռնակին շրջանում: Նրան խանդող ստրկումները կաշառում են ճարտարապետին և ամրոցը կառուցել տալիս մարդկարին բնակությունից հեռու մի կիրճում:

Հափուրի միջոցով իմանալով Երինի տեղը՝ Խոսրովն ուղար- կում է Հափուրին նրան Բերդա բերներու: Թայց հենց այդ միջոցին հայրենիքի դեպքերն ստիպում են նրան վերադառնալ Մեդա-

մեծ դժվարություններով վերջապիս կարողանում է գտնել Մալիխայի տունը՝ իրերը նրա ժառանգներին հանձնելու համար: Այդտեղ նրան դիմավորում է ջրահեղձի այրին, որ՝ իմանալով ամուսնու մահվան մասին, հայտնում է, թե նա չար ամուսին է եղել, ինըն այժմ երջանիկ է զգում իրեն՝ նրանից ազատվելու համար: Միաժամանակ նա հայտնում է իր ցանկությունը՝ Բիշրի հետ ամուսնալու մասին և բարձրացնում է երեսի քողը: Բիշրը ճանաչում է իրեն հմայող գեղեցկունու, որի սիրուց ազատվելու համար երուսաղեմ էր գնացել, ամուսնանում է նրա հետ և այնուհետև, ինչան բախտավորության, հագնում է միայն կանաչ գգեստներ:

Պատմվածքը վերջանում է կանաչ գույնի փառաբանությամբ, այն գույնի, — ավելացնում է հեղինակը, — որով զգեստավորված էն դրախտի բնակիչները:

Իւամիր դլյակ. — Ռուսական արքայադուստրը պատմում է հետևյալը: Ռուսաց երկրում մի շքեաղ արքայադուստր է լինում: Իր անսահման գեղեցկության հետ նա ուներ խորաթափանց միտք ու բազմակողմանի ընդունակություններ: Նա լիովին յուրացնում է գիտության բոլոր ճյուղերը, այդ միտք նաև հմայության արքայության բոլոր ճյուղերը, այդ միտք նաև կամբավր շուտով տարածվում է աշխարհի բոլոր մասերում, և ամենահեռավոր երկրներից անգամ անվանի ասպետները գալիս են նրա ձեռքը ինպեսէու: Սակայն արքայադուստրը շի կամենում նույնինի խոսել նրանց հետ: Հոր Ցուլտովությամբ նա կառուցել է տափս մի կախարդական ամրոց լեռնաշխարհին և փակվում այնուհետ: Ամրոցն ուներ միայն գաղտնի մուտք: Հորս կողմից նա շրջապատված էր բարձր պարիսպներով: Նրան պահապան էին բազմաթիվ խորհրդավոր արձանները, որոնք սրբություն էին ամրոցի ներար թուփնում էին ամրոցի նկարել է տափս իր պատկերը և նրա տակ գրում այն պայմանները, որոնք կատարողը կարող է ամուսնանալ նրա հետ: Այդ պայմաններն էին: Իր հետ ամուսնանալ կամեցող պետք է լուծեր բոլոր գաղտնի թաշխմանների զորությունը, գտներ գաղտնի մուտքը, թափանցեր ամրոցի ներսը, լուծեր այն բոլոր առեղծվածները, որ կառաջարեր ինքը՝ արքայադուստրը: Այդ բոլորից հետո միայն նա կհամաձայներ ամուսնանալ խիզախ ասպետի հետ: Իր պատկերը և այդ պայմանները պարունակող հայտարարությունը էին բաղարների

դարբասների վրա: Հարյուրավոր ու հազարավոր հերթաներ, զմռակած շնապա գեղեցկունու պատկերով, խիզախեցին իրենց բախտու փորձել, սակայն բոլորն էլ ամրոցի խորհրդավոր պահապանները սրերին դո՞ւ դարձան: Զո՞հվածների գլուխները կախվում էին ամրոցի պարիսպներից, որոնք կարճ ժամանակից հետո ծածկվեցին մարդկային գանգերով:

Հերթը հասնում է մի պատանի շահզագի: Որոշելով անպատճանորեն հասնել իր նախատակին՝ շահզագին մի նկարչի մոտ սպորում է բոլոր կախարդական գիտությունները: Այդ բոլորը յուրացնելուց հետո միայն՝ նա, բոլոր զոհվածների վրեժը լուծելու և արքայադատեր հետ ամուսնանալու վճռական որոշումով, հաջանուվ կարմիր գեխտներ՝ դիմում է գեպի անառիկ ամրոցը: Իր սովորած գիտությունների շնորհիվ նա հաղթահարում է բոլոր դժվարությունները, չեղորացնում խորհրդավոր պահապանների զորությունը, մտնում ամրոցի ներսը և ճշտորեն լուծում արքայադատեր առաջարկած առեղծվածները: Արքայադուստրը գտնում է վերջապես իր ցանկացած փեսացուին և հմայված նրա քաջությամբ, խելոքությամբ ու գեղեցկությամբ, տալիս է իր համաձայնությունը՝ նրա հետ ամուսնանալու մասին: Անմիջապես կատարվում է հարսանիքը, շահզագին, ի նշան իր երջանկության ու հաղթանակիք այնունետեւ հագնում է միայն կարմիր գեխտները:

Պատմվածքը վերջանում է կարմիր գույնի փառաբանությամբ, որ գեղեցկության ու երջանկության սագական գույնն է: այդ փոստանությունը հավելվում է բոսորագույն արշալույսի համեմունկարությամբ:

Փիրուզագալյան դոյլակ:— Մաղրիբյան արքայադուստրը պատմում է, թե Եգիպտոսում Մախան անունով մի վաճառական է լինում: Մի օր, իրիկնամուտին, եթք նա, իր ընկերներով շրջապատված զրոսնում էր պարտեղում, նրա մոտ է գալիս յուր առևտուկան ընկերը և հայտնում, թե մեծագին ապրանքներով ու գանձերով բեռնավորված՝ նրա քարավանը ժամանել է: Ընկերոջ ուղեկցությամբ Մախանը դիմում է գեպի քաղաքի գարբասները, բայց երբ հասնում են այստեղ, պարզվում է, որ գարբասներն արդեն փառվել են, որովհետև արեւը մայր էր մտել: իսկ քաղաքի օրենքների համաձայն՝ արեւի մայրամուտից հետո գարբասները բացելու դրավոր Մախանը որոշում է սպասել մինչեւ առավու-

րալց ընկերը մի համաձայնում և խորհուրդ է տալիս ծպտյալ կերպարով գուրս գալ քաղաքից, բեռները գիշերն իսկ տեղափոխել քաղաք և այդպիսով իսկ ազատվել մաքս վճարելուց: Մախանը համաձայնում է և հետեւում է ուղեկցին: Գուրս գալով քաղաքից՝ ընկերը նրան առաջնորդում է դեպի ինչ-որ անապատ և, կանչելով իր հետեւից՝ հանկարծ թաքնվում: Մեն-մենակ մնալով անապատում՝ նա ճանապարհ գաղաքի գաղաքից անապատում է որոնում դեպի քաղաքը, բայց նրա առջևն են ենում սարսափելի գաղաքները, մարդակերները ու հրեշտացները: Գիրմարդկային ծիգերով Հաղթահարելով բոլոր դժվարությունները և ազատվելով գիշատիչների ձեռքից՝ նա վերջապես հասնում է ամեն տեսակի մրգեր և սառնորակ ջուր Բայց հենց նա գտնում է ամեն տեսակի մրգեր և սառնորակ ջուր Բայց նա իր երկար տանջանքներից հետո, սկսում է ճաշակել մրգերը, վրա է հասնում մահակով զինված պահապանը, Մախանին բաղովվում է պատմել պահապանին իր դժբախտ ճանապարհորդաջողվում է պրատմել պահապանին դավականը ցույց դության ու արկածների մասին, ծեր այդեպանը ցավալցում է նրան և թույլ է տալիս մնալ աւգում, այն պայմանով միայն, որ նա ամբողջ գիշերն անց կացնի ծառի վրա և ինչ էլ որ տեսնի, ծառից լիշտի: Մախանը բարձրանում է գիշերելու համար իրեն ցույց տված ծառի վրա և ուզում է քննել: Բայց խավարն ընկնելուն պետք արատեղը լցվում է շնչաղագիղ աղջիկներով: Նրանք խրախճանք նարբում հենց այն ծառի տակ, որի վրա պետք է գիշերեր ինքը: Բոլոր աղջիկներին զվարացում է հրեշտակային գեղեցկությամբ մի պատվավոր կին: Մախանը ծառի վրայից հմայված նայում է իրախճայող գեղեցկությներին: Շուտով պատվավոր գեղեցկությն նկատում է նրան և կանչում է իր մոտ: Հիշելով ծեր այդեպանէ խիստ պատվերը՝ Մախանը սկզբից հրաժարվում է ծառից իշնել, բայց վերջապես մի կարողանում դիմադրել շրնազ գեղեցկություն հմայիքին և, գիշելով նրա հրավերին՝ իշնում է, նստում գեղեցկություն ու խրախճանում նրա հետ: Շուտով բորբոքվում են նրա կրիերը, և նա՝ չկարողանալով այլևս զսվել իրեն, գրկում ու համեկերը է գեղեցկություն շուրթերը: Այդ համբույրից հմայիլ գեղեցկությն դառնում է մի ճիշաղ՝ վարադի ժանիքներով: Ամբողջ գիշերը նա իր ծիրաններում սեղմելով Մախանին՝ հեշտանքով համեշերը նա կիսագիտակից վիճակում այլևս չկարուրություն է դիմադրել՝ մնում է հրեշտուու գարշելի գրկում: Վերջապատճենով դիմադրել մնում է հրեշտուու գարշելի գրկում:

պես բացվում է լույսը, և հմայքը շքանում է: Այժմ Մահմանը դանվում է մի անեղի անապատում, որ ժածկված է մեռնութեանի: Կըզիրի օգնությամբ միայն նա կարողանում է ազատվել այդտեղից և հասնել տուն: Այդ օրից ի վեր նա հագնում է միայն կապույտ գույնի հաղուստներ՝ ի նշան սգո:

Պատմվածքը վերջանում է փառաբանությամբ կապույտ գույնի, որով ներկված է երկնի կամարը:

Սանդալազոյն դրվակ:— Երկու երիտասարդներ,— ուստի մում է բյուզանդական արքայականաւորը, — ճանապարհորդում էին միասին: Նրանցից մեկի անունն էր Խելքը, մյուսինը՝ Շարրի¹ Նրանց ճանապարհն անցնում էր մի ամայի տեղով, ուր ոչ բուս կար, ոչ մարդկային շունչ: Եռառվ ծարավն սկսում է նեղել ներտալ իրեն թեկուզ մի կում շուր, խոստանալով դրա գոփարքն Շարրին տալ իր սմահցած երկու թանկապին հակինթները: Շարրը հակինթները նա խոստանում է շուր տալ միայն այն պայմանով, որ Խելքը թույլ տա հանել իր երկու աշքերը: Արքան էլ դաժան էր պայմանը, այնուամենայնիվ Խելքը աշխան իիսու սպասեկ էր զգում, որ համաձայնում է դրան: Շարրը, օգովելով այդ համաձայնությամբ՝ հանում է ընկերոջ աշքերը, կողոպտում նրան և, նույն նրան անապատում ավազների մեջ ընկած ու հեռանում: Խելքը մենակ է մնում՝ թափակելով իր աշքերից հոսող արյան մեջ և տառապելով ցավի ու ծարավի կրկնակի տանձտնուվ: Վերկույրին տանում են քուրդի տուրդ խաշնարածի աղջիկը: Որի տերեւնները բուժի դեղ էին և՝ Կուրության, և՝ ընկնավորության դեմ: Այդ ծառի տերեւններով Խելքը բուժվում է, ապա՝ ամսանալով խաշնարածի աղջկա հետ՝ ժառանգում նրա ամբողջ հոտր երկար ժամանակ շանցած՝ լուր է տարածվում, թե շահի աղջիկը տառապում է ընկնավորությամբ, և ով որ բուժի, կդառնան նրա փեսան: Քրդի խորհրդով Խելքը նույն ծառի տերեւնների միջոցով բուժում է շահի աղջկան, ամուսնանում նրա հետ և թոքափը

¹ Համբանական կենդանության տառապելական հերոս:

² Խելքը հաշնակում է բորիք, Շարը (=շան)՝ չորիք:

դաշնում: Այդ միջոցին նրա մոտ են բերում Շարրին, որ դարձյալ ինչ-որ հանցանք էր կատարել: Խելքը հիշեցնում է նրան՝ իր դեմ ինչ-որ ջարագործությունը, խստորեն հանդիմանում, բայց և այն գործած չարագործությունը, խստորեն հանդիմանում է առանց պատճենու: Խելքի զայրացած թափավոր-պես ազատում է առանց պատճենու: Խելքի զայրացած թափավոր-պես ի հանդուրժում այդ մեղմ վերաբերմունքը հրեշավոր շա-աները վի հանդուրժում այդ մեղմ վերաբերմունքը հրեշավոր շա-աները վի հանդուրժում է նրան, հասնում հնտենից ու ուղանում:

Պատմվածքն ավարտվում է այն բացատրությամբ, թե այն ձառի բուժի տերեւնները սանդալագույն էին:

Սպիտակ դրվակ:— Իրանի արքայադուստրը պատմում է, թե մեծահարուստ երիտասարդ քաղաքից դուրս ուներ մի հրաշաւ-շի պարտեզ: Մի անգամ, երբ նա այդ պարտեզն էր գնում, դեռ ինքու շմտած ներսից լսում է ինչ-որ երաժշտության ու երգի ձայն: Սուսենալով պարտեզի գարբասին՝ նա տեսնում է, որ փակ-փակ է դարրասը: Երկար ժամանակ նա բախում է փակ զնները, բայց ոչ ոք բացելու չի գալիս: Երիտասարդն ստիպված է լինում քանդել պատր և ներս մտնել: Այստեղ նա տեսնում է մի խումբ բաղժիկներ, որոնք ազատորեն ուղախանում են ու գրունում: Տես-անելով երիտասարդին՝ աղջիկները կարծում են, թե նա զող է, և զող ծեծում են նրան: Սակայն երիտասարդը, վերջապես, կարո-ւակ ծեծում է համատացնել նրանց, թե ինքն այգու տերն է, Աղջիկ-ները հաշտվում են նրա հետ և պատմում, թե իրնքն՝ քաղաքի բու-լոր գեղիցկուհիները՝ համաքվել են այդտեղ ուրախանալու ազատ, առանց հետաքրքրվող աշքերից քաշվելու: Նրանք խորհուրդ են տա-լիս երիտասարդին շնանդարի իրենց և առաջարկում են նրան ընտրել իրենցից մեկին ու հաճոյանալ նրա հետ: Երիտասարդը մտնում է տաղավարը և անցքից ուշագրությամբ դիտում ավազա-նում լողացող աղջիկներին ու համեմատում նրանց իրար հետ: Վերջապես նրա ընտրությունը կանգ է առնում մեկի վրա, որին և անմիջապես բերում են իր մոտ: Երկու երիտասարդները կամե-նում են անձնատոր լինել վայելքներին, բայց և, միաժամանակ, դեռ աղջկա աղջկա վայելքներին կան: Ի վեր-ջում իր բազմաթիվ խանգամանքների կան: Ի վեր-ջում, երիտասարդը այն մտքին է հանգում, որ բախուը ինքն է չոր, երիտասարդը այն մտքին է հանգում, որ բախուը ինքն է չոր, վանդակը իրենց՝ թեթևամտորեն վայելքներին տրվելու, որոշում վանդակը իրենց՝ վանդակը իրենցին հանդիմանակ է առմուսնակ աղջկա հետ բոլոր սովորությունների համաձայն և

այն ժամանակ օրինական կերպով հաճոյանալ նրա հետ կամեցածին չափ:

Պատմվածքը վերջանում է սպիտակ գույնի՝ մաքրության ու խաղաղության խորհրդանշանի՝ փառաբանությամբ:

Կերպանում են նովինները, ավարտվում է Բահրամի մի շաբաթվա կյանքի ցուցադրումը: Թողնելով Բահրամին իր սիրունների դզբակում՝ հեղինակը պատմում է, թե կրկին իրանի վրա ծանրանում է կործանման սպառնալիքը: Գարնայք ինսական խարանը կրկին հարձակվում է իրանի վրա: Բահրամը ցանկանում է դիմագրել կովով, բայց այլևս ուազմումակ զորք չունի: Չունի նաև բավականաշափ դրամ՝ վերստին զորք հավաքելու համար: Ավ, առան «օգնության» է գալիս վեղիր Ռաստ-Ռուշանը: Նա խորհուրդ է տալիս թագավորին՝ բանի կերպով Հպատակներից կորզել դրամ և այդպիսով փրկել երկիրը կործանումից: Բահրամը հանձնարարում է վեզիրին՝ անձամբ կատարել այդ և տալիս է նրան ամեն լիազորություն: Վեզիրը դառնում է երկրի իրատական տնօրինը: Կարճ ժամանակում նա անսանձ կեղեքաձեներով ու բռնություններով ամերում է երկիրը, բանտերը լցնում անշամար անձեզ բանտարկյալներով: Մինչդեռ Բահրամը, վայելքների, խրախնանքների ու որսորդությունների մեջ անցկացնելով օքերը, անտեղյակ է վեզիրի անիբավություններին, և հպատակներից ոչ ոք էլ չի համարձակվում այդ մասին հայտնել նրան: Նա մտահոգվում է երեմն այն բանի համար, որ թշնամին չի պարանում և երկիրը գեռևս մնում է վտանգի մեջ: Ի վերջո, մի անգամ որսորդության ժամանակ նա, չուր որսոնելով՝ ընկնում է մի հովիք մոտու Հովիք խրճիթի աացե սոսենուց կախված էր մի անշնչացած շուն: Բահրամը հարցնում է հովիքը, թե ինչո՞ւ այդպես պատմել է շանքը Հովիքը պատմում է, թե շոնէլ յուր հոսի համարակիմ պահապաննե է եղել: շատ անգամ ինքը շանն է հանձնել ամրուց հոտը և որևէ տեղ վնացել, իսկ շունը լիակատար ապահովության մեջ պահել է հոտը: Սակայն մի անգամ հովիքը նկատել է, որ հոտը նվազում է: Պարբերաբար ստուգելով՝ նա համոզվում է, որ խսկացն սխարների թիվը պակասում է, բայց ոչ մի կերպ չի կարողանում պատճառը գտնել: Մի օր, եթե առվի ափին, հոտի մոտ, ինքը՝ քերաց հնտո, պատկած մտածում էր իր դժբախտության մասին, տեսավ, որ մի էդ գայլ մոտեցավ ու շան լեզվով կանչեց իր գամփ-

սին: Գամփուը մոտեցավ գայլին, գորգուրեց նրան, ապա կատարելով իր ցանկությունը՝ փովեց դեսնին ու քննչը: Գայլը, միանդամայն ապահովված, քաշելով տարավ հոտի առաջնորդ խոռվին: Այդ պատճառով էլ, առա, նա կախել է շանը. «Ով դավաճանին շան մահով չի պատժի, իմացիր, նրան աշխարհում ոչ ոք չի վասարանել», — վերջացնում է հովիքն իր պատմությունը, Բահրամը հասկանում է հովիքի պատմության փոխաբերական միտքը և առզիւմ է խորը մտածմունքների մեջ: «Հովիքը հսկեմ, հապատակները՝ իմ հոտը, իսկ վստահություն վայելող պահապանը՝ իմ առաջին վիզիրը... Երբ թագավորության հիմքերը կործանվում են, մատահված անձից պետք է հաշիվ պահանջին», — որոշում է նա, և, քաղաք վերադառնալուն պիս, պահանջում է բանտարկյալների ցուցակը: Ցուցակում նա տեսնում է, որ բանտարկյալներից շատերի անվան դիմաց դրված է: «Թագավորը հրամայում է պատժել... ներում է շնորհում վեզիրը»: Բահրամը հասկանում է ամեն ինչնա հրամայում է վեզիրին բանտարկյել, իսկ անմեզ բանտարկյալներին աղատել: Այստեղ բանաստեղծը դարձալ ներմուծում է յոթ հավելյալ պատմվածքները: բանտարկյալներից յոթ հոգի պատմում են թագավորին, թե ինչու են իրենք կալանավորվել: Դրանք ցընցող ապավորություն թողնող պատմություններ են, որոնք մերկացնում են վեզիրի անլուր բռնություններն ու մեքենայությունները: Կաքանի կողմից Բահրամի մոտ ուղարկված սուրբանդակների միաբանի կողմից Բահրամի մոտ ուղարկված հանցանքը ևս: Նա չոցով երեսն է հանգում վեզիրի մի նողկալի հանցանքը ևս: Նա կավանի բանակցություններով խոստացել է խրախնին՝ երկիրը նրան հանձնել: Բահրամը մահապատժի է ենթարկում վեզիրին: Սակայն դրանով ամեն ինչ չի վերջանում, Խորապես ցնցված այդ դրան իրողություններից, նա համոզվում է, որ դրանց համար առաջին հերթին ինքն է պատասխանատու, ինքը, որ, անձնատուր եղած իր հաճություններին, աշխաթող է արել իր պարտավորությունները համարական հանդեպ վեզիրին: Նա հրաժարվում է իր նախկին կենցաղից, հրկիդում է յոթ դրյակները և հարեմը ցրում: Նա չի կարողանում հրաժարվել միշտ այն որսորդությունից և, ի վերջո, որսորդության միջոցին էլ մահ է պատճառը: Մի անգամ երկու ծառայի ընկերակցությամբ նա հետաքանում է մի ցիոնի: Ցիոն տանում է նրան դեպի իմ քարանձավի ներսը՝ նա այլևս չի վերադառնում: Զորքը

Հառոնում է արդտեղ, որ սպասում էին շփոթված ծառաները. երկար սպասելուց հետո՝ նրանք տեսնում են, թե ինչպես քարանձավոց փոշի է ելում ու լավում մի ձայն, որ ասում է. ոգնացեք տաձանակավորը գործ ունի: Մտնում են քարանձավը, որ շատ խոր ձեւ և լուսեր ուրիշ ելք, բայց Բահրամին չեն գտնում: Գալիս է Բահրամի մայրը, նրա հրամանով փորում են քարանձավի հիմքը, բայց զարդյալ չեն գտնում թագավորին: Այդպես ել խորհրդավոր կերպով անհայտանում է Բահրամը:

Եթե Նիգամիի առաջին ստեղծագործությունը կրում էր զիգամ-
տիկ բնույթ, իսկ երկրորդն ու երրորդը՝ միրային-ուժանտիրկան,
ապա՝ այս ստեղծագործությունը կրում է գերազանցալիս արկա-
ծային, մասամբ նաև՝ հերիաթային բնույթ։ Հատկապես պետք է
նիշել այն թեթե, հանգստացուցիչ տրամադրությունը, որով համարկ-
ված է այս վիպերգը։ Շնորհով ու Ծիրինում» հազմանակող սիրո
բարերաստիկ ընթացքը զուգորդված է ցնցող, տրափիկ մոմենտ-
ներով. մի կողմից Ֆարճադի ողբերգական ինքնազդուումը, մյուս
կողմից՝ Խոսրովի որպես դավադրություններն ու վիպերգի մոալլ
վերջավորությունը խոր տրագիֆմի գրոշմ ևն թողնում վիպերգի
մրաւ ուելլի ու Մեծունի» մեջ երկու սիրահարների դժբախտ ափու
անհաջող ընթացքը ավելի և ավելի խորացնում է նրանց տրամա-
դրան՝ հասցնելով եղերական վախճանի։ Մինչընոք այստեղ, «Յոթ
գեղցիկուհիների» մեջ, թե՛ Բահրամի ամբողջ արկածները, և թե՛
սիրո պրոբեմի լուծումը ոչ տրագիկ, այլ առավելապես օպտիմիզա-
մի բնույթ ունեն։ Այս բանի համար նա օգտագործել է և՛ արկա-
ծային տարրը, և՛ հերիաթայինը, որ մի տեսակ վերացումն է ի-
րական կյանքից, մոռացումն՝ բոլոր անախորժությունների, քայլեսի
ու տառապանքների և սպացումն զեպի երջանիկը, «Յոթ գեղցիկու-
հիների» պատմած նովելներով նա ընթերցողին հեռացնում է իրաւ-
կան կյանքից ու տանում զեպի հերիաթայինը, որ նկարագրված է
արխական վար գույներով։ Եվ սակայն, չնայած այդ բոլորին, Նիզա-
մին այստեղ էլ հետևողական է իր սկզբունքների մեջ, այստեղ էլ
նա հանդես է գալիս իրեն խիստ քննադատ ու ոչ մի զիշում չի
կատարում։ Չնայած հերիաթների ու արկածների առկայությանը,
այնուամենայնիվ այստեղ ևս իր հիմնական նպատակն է ոմացել
և այդ՝ երկրի կառավարման հարցն է։ Իր բոլոր արկածներով հան-
դիրք՝ Բահրամ Գուրը հանդես է գալիս առաջին հերթին իրու թա-

կայացնելով՝ այդ պատմվածքներն իբրև մի մեղադրական ակտ՝ ֆեռագական արիստոկրատիայի նկատմամբ։ Նա վառ զույներով ցուցադրում է պալատական պաշտոնենության ծախվածությունը, նենդություններն ու դաշտանությունները, ապացուցելով, թերևս ոչ առանց ցամփի, որ նույնիսկ արդար թագավորը անօդնական ու անդոր է, որովհետև շրջապատված է այդպիսի պաշտոնյաներով։ Այսպիսով, այս ստեղծագործության մեջ ևս ներգամին հարազատ մեալով այն սկզբունքին, թե գեղարվեստական ստեղծագործությունը ոչ միայն պետք է ծառայի ընթերցողի գեղարվեստական հա- ռուցքներին, այլև պետք է ուսուցանի, հանդես է գալիս մի կող- մից իբրև քննադատող ու մերկացնող, լյուա կողմից՝ իբրև քարո- զիչ ու խրատող։ Բայց եթե «Գաղղոնիքների գանձարանում» նա նույն բանը կատարում էր անկախ, իբրա հետ չկապակցված, եր- բեմ չոր խրատական «ըստուցներով», ապա՝ այստեղ նա իր խր- ատները տալիս է գեղարվեստական վառ, անջնջելի տակավորու- թյուն թողնող պատկերների մեջ։

Առանձնահատով ուշադրության է արժանի այս ստեղծագործության կառուցվածքը: Մի կողմէց՝ Բահրամի արկածները, իսկ մյուս կողմէց՝ Հավելադիր պատմվածքները, որոնցով միջնորդական վորվում են այդ արկածները, զարգանում են վիաբրդի մեջ զուգահեռար, և հենց դրա շնորհիվ էլ շափականց բարդանում է, պիտի կառուցվածքը: Եվ, սակայն, չնայած այդ ամբողջ բարդության, չեղինակը բացառիկ վարպետությամբ կարողացել է ներհյուսել այդ բոլորն իրար և ստեղծել մի կուռ ամբողջություն: Խնշաբի դարմանալի ներդաշնակություն են կազմում երիտասարդ արքայանի դդյակի կառուցումը և յոթ դպյակների կառուցումը, յոթ պատկերները և յոթ գեղեցկուհիները, նույնանի զգցումն ու ճագնակյաց դասնալը և Բահրամի հրաժարումն իր վայելքներից, դպյակների հրկիվումն, հարեմի ցրումը, յոթ գույնների և յոթ նովիկների համապատասխան հաջորդականությունը, վեզիրի շարադրությունները և յոթ բանտարկյալների պատմածները, Բահրամի դասած գանձերը՝ բարայրում և նրա խորհրդավոր անհայտացումը քարանձավում: Նիզամին ամենավաղ երանդներուլ կարողացել է զուգորդել այդ բոլորն իրար հետ, շաղկապել ու ձուլել մի ներդաշնակ ամբողջության մեջ: Զափականց բնորոշ է հատկապես յոթ դեղեցկուհիների պատմած նովելների և դպյակների գույնների ներ-

«Յոթ պատկերներն» այսպիսով, գովարծությունը կազմություն է, անթառամ՝ իր վառ գույներով, տպաշալի ստեղծագործություն է, աբատկերներով, ցնցող՝ բռնությունների դեմ ուղղված վորիչ՝ իր պատկերներով, ցնցող՝ բռնությունների դեմ ուղղված բորբոքված հումանիզմով ու լավատեսությամբ այս ստեղծագործությունը միշտ թարմ, միշտ գրավիչ ու հրապուրիչ է եղել, «վարակել է ընթերցողներին առողջ տրամադրությամբ։ Այսօր էլ նա իր գեղարվեստական կատարելուությամբ դժավարիչ մի ստեղծագործություն է և իբրև այդպիսին էլ կմնաւ։

ԽԱՅԱՆՊԱՐ-ՆԱՄԻՆ.— Յուր վերջին ստեղծագործությամբ
մար նիզամին իբրև սյուժե ընտրել է Ալեքսանդր Մակեդոնացու
կյանքը, Այս թեման նրա ընտրության արժանացալ, անշուշտ,
այն բանի շնորհիվ, որ Ալեքսանդրի մասին ավանդությունները
տարածվել էին Արևելքի ժողովուրդների մեջ տարրեր վարիանունե-
րով, ավանդություններ, որոնց մեջ Ալեքսանդրը ներկայանում էր
իբրև մեծ զորավար ու մարդարե։ Այստեղ էլ չեղինակն իր ստեղ-
ծագործության համար նյութ է քաղում տեղական ժողովուրդների՝
ոչ միայն մահմեդական, այլև քրիստոնեական ու հրեական ժողո-
ուրդների ավանդություններից և, հատևաբար, այստեղ էլ նա իր
պուրական ավանդություններից և, հատևաբար, այստեղ էլ նա իր
ստեղծագործությունն, այսպիս ասած, տեղայնացնում էր ու կա-
պում հարեւան ժողովուրդների հետո Մյուս կողմից՝ Ալեքսանդրի
րի ու Արքունության հայացքները՝ օգտվելով Ալեքսանդ-
րի ու Արքունության միջև եղած կապերից։ Այսպիսով, Ալեքսանդր
Մակեդոնացուն նիզամին դիտում էր ոչ միայն որպես հզոր նվա-
ճորդի, ինչպես ներկայացված էր նա ավանդությունների մեջ, այլև
որպես փիլիսոփայի ու մարդարեի Շանոթանալով նրա մասին ե-
ղած ավանդություններին՝ նիզամին սինթեզի է ննթարկում դր-
բանը, քաղում յուրաքանչյուրից այն, ինչ որ անհրաժեշտ է Հա-

մարում և կերտում է մի բացառիկ իդեալական կերպար: Խափը չնզդինակը, քննագատում է իր ուսումնասիրած ավանդությունների միավողմանի ու թյունը և հայտնում, թե ինքը դիտում է Ալեքսանդրին իրնք կողման՝ միացնելով դրանք մի ամբողջական, կատարյալ կերպարի մեջ:

Բացի նորագույն պատմություններից, ևս կարդացել եմ նաև Հրեական, քրիստոնեական ու ուրացավական գրքեր,—

... Ոմանք կոչում են նրան գահակալ,
Երկրների հովանավոր, ուստի ավելին՝ Հորիզոնների նվաճող,
Արքշները՝ նրա մերձավոր մարդկանցից,
Նրան իմաստության վկայագիր են տվել:
Երրորդները՝ նրա մաքրության ու կրոնի նկատմամբ ունեցած
նախաձեռնության շնորհիք:—

Նրան համարել են մարդարի:
Իսկ ես իմաստունների ցանած երեք հատիկից
Ուզում եմ անեցնել մի պաղարեր ժառ:
Նախ՝ ես կրախեմ թագավորության դռները,
Կպատմեմ երկրների նվաճման մասին:
Ապա հՀյուսնեմ խոսքեր իմաստության մասին,
Կընորոգեմ հնավանդ պատմությունները:
Հետո կրախեմ մարդարեսության դռները,
Զի և տերն է կոչել նրան մարդարի:

Խնչպես անսում ենք նիդամին խիստ ընդարձակ ծանոթություն է ունեցել Ալեքսանդրի մասին եղած ավանդությունների հետ, ևս գիտակցարար վերցրել է դրանցից ինչ-որ անհրաժեշտ է եղել իր նպատակադրմանց և, որ կարևոր է, օգտագործել է այդ աղբյուրները խիստ բննագատորեն: Նրա այդ բննադատական վերաբերմունքը առկա է միշտ՝ սկսած Ալեքսանդրի ծագման պատմությունից մինչև վերջը:

Ամբողջ ստեղծագործությունը նիդամին բաժանել է երկու մասի: Երկու մասերի ընդհանուր վերնագիրն է, ինչպես առել ենք, «Աքանդաբար-նամեն»: Բացի այդ ընդհանուր խորագրից, բարսրանշուր մասը կրում է առանձին վերնագիր: Առաջին մասը, որ ծագալով շատ ավելի մեծ է, բան երկրորդը, կոչվում է «Են»:

Րաֆ-Նամեն» (Փառքի գիրք): Այդ վերնագիրը, ինչպես հետում է ներածությունից, պատկանում է Հնդինակին, և այդպես նա վերնագրեալ է, անշուշտ, նկատի առնելով այն, որ հնոց այդ մասում է պատմության մասին դրանքի հաղթանակների մասին, հաղթանակներ, ուժուց շնորհիվ նա փառքի գագաթնակետին է հասնում:

Երկրորդ մասը որոշակի վերնագիր չունի: Հիմք ընդունելով այն բառերը, որոնցով նա սկսվում է, հաճախ կոչում են Շիթրեպ-նամեն» (Երատագիրք), սակայն, նույն այդ մասը կոչում են նաև «Թթալ-Նամեն» (Հաջողության գիրք): Բայց զրանից, հին ազգային բառերում նրանք առաջին մասը կոչում են «Թերրի» (Ցամաքաց ցին), իսկ երկրորդը՝ «Թեհրի» (Սովային), հիմք ընդունելով այն, որ երկրորդ մասում պատմվում է Ալեքսանդրի ծովային ճանապարհությունների մասին:

Դիբըն մկանում է դարձալ ներածական գովաներով, որոնցից առանձնապես ուշագրավ են այն մասը, որի մեջ համառուակի շարադրված է գրքի ամբողջ բովանդակությունը, և այն մասը, որի մեջ ընթերցողի հասունք ուշագրություն է հարվիրում այս ստեղծագրության վրա: Այս վերջին հանգամանքն առանձնապես ուշագրավ է այն բանիվ, որ ցույց է տալիս, թե որքան մեծ նշանակություն է տվել նիզամին իր այս վերջին պոհմին: Եվ այդ պատմական չէ, այստեղ բանաստեղծը լայնորեն ծավալելով իր մտքերը, կարծես թի մի ընդհանուր հայտարարի է բերում նախորդ ստեղծագրություններում ասածները, ամբողջացնում դրանք և ասում իր վերջին խոսքը: Այսպես պետք է բացատրել այն երևությը, որ նիզամին իր նախորդ ստեղծագրություններից և ուշագրությունների մեջ տարրեր լեզվնդմեր են Հորինվել, և, որ լայնացանց հետաքրքրական է, մեծ մասամբ հորինել են նվաճած ժողովուրմերը՝ ցեղակցական կաւզ ստեղծելով՝ Ալեքսանդրի ու իրենց միջև: Այդ միանգաման հասկանագիր է Ալեքսանդրի հաղթանակներն այնքան անուրանական էին, որ որմէ կերպ հերթել դրանքը կարելի են, առա, նվաճած երկրի ֆեռդալական արիստոկրատիան տիտանում է այն լեպենով, որ, իրու թի, Ալեքսանդրը ցե-

58

Դակից է իրենց, և արդարացնում է նրա հաղթանակը: Խսկապես, եթե Ալեքսանդրը, ասենք, Դարեհի որդին էր, ծնված Փիլիպպոսի աղջկանից, ապա՝ ի՞նչ զարմանալի բան է իրանի նվաճումը նրա կողմից: Այսպես ահա, յուրաքանչյուր երկրի ֆեռուալիզմը՝ Ալեքսանդրի մահվանից հետո, հորինում է իր և Ալեքսանդրի ցեղակցության առասպելը: Դրանցից առանձնաւում պետք է հիշել սուս կալխոմենեսի վեպը, որի մեջ Ալեքսանդրը համարվում է Եգիպտական բուրմ Նեկտաների և Մակեդոնիայի թագավոր Փիլիպպոսի կողմից: Այս վեպը առ պատճեն է Ալեքսանդրի մասին առաջարկություն և առ առաջարկություն է նաև իրանական վարիանտը, որի մեջ պատմվում է, թե Ալեքսանդրը Աքենին հարստության թագավոր Դարեհի և Փիլիպպոսի ազջկա որդին է, որ որդեգրվել է պատի՝ Փիլիպպոսի նողմից: Այս լեզենդը ժանրամասնորեն, իբրև միակ ճշմարիտ բացատրություն Ալեքսանդրի ծագման մասին, պատմում է Ֆիլիպպոսի հայած այն Հայունի թշնամանքին, որ տածում է գեղի Ալեքսանդրը: Ի դեպ, այս լեզենդներով ոչ միայն արդարացվում էր պարտությունը, այլև իրենց ցեղակից դարձնելով մակեդոնացի զորավարին, տուժիկ ազնվականությունը բաժանում էր նրա հետ նաև նրա փառքը: Եվ, իրոք, տոհմիկ աղնվականության գաղափարախոս Ֆիրդուսին ոչ միայն արդարացնում է Ալեքսանդրի հաղթանակը Դարեհի դեմ, այլև ուզդակի ասում է, թե ինչպես այդ, այնպես էլ բոլոր մյուս Հայունակներին Ալեքսանդրը հասկ է այն բանի շնորհիվ միայն, որ նրա երակներով հոսում էր աքեմենյանների արյունը: Նիշամին Ալեքսանդրի ծագմանը նվիրված զիսում պատմում է այս լեզենդը, բայց մերժում է, համարելով այն սուս: Նա պատմում է նաև մի ուրիշ լեզենդ, ըստ որի Ալեքսանդրը մի թշվառ միանձնում ուրիշ է: Որսորդության ժամանակ Փիլիպպոսը գտել է նրան ավեակների մեջ՝ մոր դիակի կողքին, սեփական մատը ծծելիս, և որդեգրել է: Ասկայն հեղինակը սրան էլ մի հավատում: Երկուսի մասին

Երկու պատմության մեջ էլ ճշմարտությունը կորած է,
Դատարկ խոսքերը ուշադրության արժանի շնու:
... Կարդացել հմ ես բոլոր երկրների պատմությունները
Որ աղան Փիլիպպոսից է ծնվել:

և համոզված եմ,

Այսպես, ուրեմն, նիզամին հիշում է այդ լեզենդները, բայց բնադրատարարը մոտենալով դրանց, մերժում դրանք ու գոնում՝ որ Ալեքսանդրը ուղղակի Փիլիպպոսի որդին է: Այսպես է լուծում նա Ալեքսանդրի ծագման հարցը: Այնուհետև հեղինակը հատուկ ուղարկություն է նվիրում յուր հերոսի դաստիարակությանը: Ալեքսանդրը սովորում է Սրբութանձնված հետ և ստանում է բազմակողմանի կրթություն: Վերջապես Ալեքսանդրը գա՞յ: Էարձրանում հոք մահեց հետո: Նա երգում է լինել արդար թագավոր և մտածել իր հպատակների երջանկության մասին: Խնչպես նկարագրում է Նիզամին, նա խկապես իրագործում է իր երգումը: Շուտով ամբողջ պատահակների ամառացը ամառացը է նրա՝ իբրև արդար և իմաստուն թագավորի՝ համբավը: Եվ, ահա, այդ համբավը լսած եփատացիները օգնություն են խնդրում այդ արդար թագավորից: Նրանք հայտնում են Ալեքսանդրին, որ սևամորթ զենդիները (զանզիքարցիներն) ամայացնում են ամբողջ Նեղոսյան հովիտը, և խնդրում են օգնության համար: Ալեքսանդրը հանձն է առնում օգնել և արշավելով զենդիների գեմ, անեղ մարտում հաղթում է նրանց: Իր հարուստ ուղմական ավարեց նա մեծամեծ նվիրներ է ուլարկում Դարեհին, որին հարկատու էր Փիլիպպոսը: Սակայն Դարեհը մեծ արժեք չի տակիս Ալեքսանդրի կողմից ցուցաբերված այդ ուշադրությանը և բատ արժանվույն չի գնահատում մեծագին գանձերը: Վիրավորված Ալեքսանդրը որոշում է այլևս հարկ շտալ նրան և խօսել իր հարաբերությունները նրա հետ: Նա հանգամանորեն հաշվի է առնում Դարեհի զորությունը, կշռագատում է նրա և իր ուժերը, ապա՝ նոր տարվա օրը խնջուրում լսելով երգի կոչը՝ ամբողջ աշխարհին տիրելու մասին, որոշում է միանել իր արշավանքները Դարեհի գեմ պատերազմելուց ու ետ է պահանջում նրան ուղարկած իր նվերները: Մի անգամ նա որսորդության ժամանակ ուղարկած իր նվերները, Երկու կավող երկու կաքավ, որոնցից մեկին իր առնում զնելով, մյուսին՝ Դարեհինը, ուշադրությամբ հետևում է կովի ընթացքին, մտածելով, որ իր առաջիկա պատերազմում կը հաղթի նա, ում անունը կրող կաքավն այս կովում հաղթող դուռը գա: Կոփին ավարտվում է այն կաքավի հաղթանակով, որ Ալեքսանդրի անունն էր կրում, բայց օդ բարձրանալով ընկնում է արծվի ձեռքը, Այս նախագուշակությունից Ալեքսանդրը համոզվում է, որ ինքը հաղթելու է, բայց իր կյանքն էլ կարճատև է լի-

նելու: Այսուամենայնիվ, վստահ իր հաղթանակին, նաև պատրաստվում է պատերազմի: Շուտով նրա մոտ են բալիս Դարենի սովորակները և հայոնում են, թե Իրանի թագավորը հարկ է պահանջում: Գայրացած Ալեքսանդրը խստորեն մերժում է նրանց. «Ով կամավոր կերպով նվիզնեց է ուղարկում, նա, վախճառութ նման, ստորագուցիչ հարկ շի ուղարկի», — ասում է նա և վերաբարձնում սուր-հանդակներին: Դարենը կրկին ուղարկում է սուրբանդակներին, այս անգամ հանձնելով նրանց գնդակ, շովան (խաղափայտ) և քնջութ, որոնք սուրբանդակը պետք է տար Ալեքսանդրին, եթե նա մերժեր հարկ տալ: Ալեքսանդրն իսկապես մերժում է, և սուրբանդակը տալով նրան գնդակն ու շովանը, իսկ քնջութը ցանելով հատակին, բացարում է դրանց միտքը, գնդակն ու շովանն ուղարկելով՝ Դարենն ուղղում է ասել, թե Ալեքսանդրը դեռ իրիսա է պիտք է խաղա դրանցով, իսկ քնջութը նշանակում է, թե Դարենի գործերն անհամար են: Սակայն Ալեքսանդրը բոլորովին այլ մեկնություն է տալիս դրանց.

Ինձ Դարեհը նրա համար չէ՝ ուղարկել շռպանը, աբոյք,
Որ իրենից խլեմ թագավորությունը, ու ետան ու ճ

առաջը է հայ:
Ինկ զնդակը, որ ես տեսնում եմ իմ առջի,
Աստղաբաշխները ձևով երկրպագողի հետ կհամեմտանե

Հարտակին թափված քնչութի վրա թոշումներ է բաց թողնում, ոռոնք իսկույն մաքրում են ամբողջ քնչութը, և Ալեքսանդրը հայտնում է եղրակացությունը.

Թող Դարեհն ուղարկի քնչութիւն նման բազմաթիվ զորքեր, իմ զինվորները թոշուներ են, քնչութիւն նրանց կեն:

Քնչութի փոխարեն Ալեքսանդրը վերապաշտպակ սուրբանեդակներին է հանձնում սպանդի (սիփենդ) դառն սկզբերը, որ ուսեւի շնորհի թաջումի համար, ապա՝ սկսում է արշավանքի պատրաստությունը։ Շուտով նա լուր է ստանում, թե Դարենը մեծ զորքով մտել է Հայաստան և արշավում է Ալեքսանդրի դիմ։ Վերջինս լուր է երթին աներկյուզ կերպով շարժում է իր զորքը, և ուրիշակցելու

որ մեծամեծների հետ և նախագծելով Հարձակման գործողությունը՝ Դարեհը Հանդիմանանքներով ու սպառնալիքներով է նաևակ ուղարկում Ալեքսանդրին ու պահանջում Հնազանդությունը. Ալեքսանդրը պատասխանում է մեղմ, բայց խրատական ու հպարտ տուով. «Աստված քեզ զորություն է տվել, բայց մի գոռզանար ասուցուց առանձնաշնորհածների հանդիպությունը, — ասում է նա և այդ ուղարկում ամբողջ պատասխանը. Վերջապես սկսվում է աշեղ ճակատամարտը երկու զորքերի միջև՝ Մոսուլի մոտ. առաջին օրը երկու կողմերն էլ կրվում են անդիքող ու կատաղի և մինչև երեկո ոչ մեկը մի զիջում իր զիրքերը. Զորքերը գիշերային դադար են առնում. և, առա, հենց այդ ժամանակ Դարեհը զորավարներից երկուար, որոնք անսպատված էին իրենց թափավորից, դալիս են Ալեքսանդրի մոտ ու խոստանում սպանել Դարեհին, եթիւ Ալեքսանդրը վարձատրի իրենց առատորներն Ալեքսանդրը, մտածելով, որ սպանել տալով Դարեհին կարող է խոսափել արյունաբեկ ճակատամարտից ու խնայել հազարամոր զինվորների կյանքը՝ ընդունում է նրանց առաջարկը և զորավարները զնում են. Հաջորդ օրն իսկ նա լոր է ստանում, որ Դարեհը խփված է. Գնազով հրանի գոռոզ թափավորի համբարը՝ զտնում է նրան մահվան տաքնապի մեջ. Հովհիւ պատեկերներով է հեղինակը Ակարապետել երկու հզոր ախորանների հանդիպումը. Ու Հաղթողի գոռոզությամբ, այլ գեհանձնորեն ու ցավակցաբար է դիմում Ալեքսանդրը Դարեհին, որ տառապում է մահվան դեմ իր անզորության գիտակցությամբ, բայց հարգանքով ընդունում Հաղթող ախոյանի ցավակցության խոսքերը. Ալեքսանդրը խնդրում է նրան հայտնել իր ցանկությունները՝ խոստանալով ճշուությամբ կատարի դրանք. Դարեհը հայտնում է հետեւալ երեք ցանկությունները.

Հուաշինն այն, որ անմեղներին սպանելու համար
ու լինես արդար դատավոր՝ մարդասպանների նիստմամբ:
Իկրորդ այն, որ արքայական գահը և թագը
մաստաբար պահես և շարիք չգործես:
Իրացդ հանիբ ատելության սերմը,
Իի զրկիր այս երկիրը մեր տոհմից:

Երրորդ՝ այն, որ իմ կանանց մոտ գնալով
Չանապատվես իմ կանանոցը:
Խովշենեկին, որ դուստրն է իմ
Եվ խնամված է իմ իսկ ձեռքի տակ,
Թո կինը դարձրու...

Ալեքսանդրն ընդունում է այդ պատվերները, երկու զորակարներին, որոնք սպանել էին Դարեհին, նա վարձատրում է հարուստ պարգևներով՝ իր խոստումը կատարելով, բայց անմիջապես մահապատժի է ենթարկում նրանց՝ իրքն դավանաների: Նա գա՞ է բարձրանում, հրովարդակ արձակում՝ խոստանալով արգարովիշամբ կառավարել երկիրը և բռնությունը հաղածել, Կամենալով վերացնել զրագաշատական կրոնը՝ նա ամենուրեք կործանել է տալիս ատրուշաները և արգելում կրակապաշտությունը: Դարեհին տված խոստման համաձայն, ամուսնանալով գեղեցկուհի Ռովշենեկի հետ, Արիստոտելի հետ ուղարկում է նրան Հունաստան, իսկ ինը գնում է Արաքիս, առանց պատերազմի իրեն հպատակեցնում արաբներին, ապա՝ Քարե գնալով՝ կատարում սահմանված պատույտը տաճարի շուրջը և իրաքով ուղերվում գեղի հայրենիք: Այդ միջոցին նրա մոտ են գալիս Ազրբեջանի սուրճանդակների և օգնության կանչում նրան՝ արմենների ու արխազների դեմ: Հապանդեցնելով հայերին և ապա՝ արխազներին, որոնց Դուլալ թագավորի գեմ աղրեշանցիները բողոքել էին Ալեքսանդրին և օգնություն խնդրել, նա վրաստան է մտնում ու կառուցում այնտեղ Թիֆլիս քաղաքը: Ուշագրավ է, որ նիզամին շատ մեծ գովասանքով է խոսում այդ քաղաքի մասին և համարում է այն ուղղակի երկրային դրախտ: Այստեղից նա ուղերվում է դեպի Բերդաշիդին վառ գույներով նկարագրում է այդտեղի բնության գեղեցկությունը, գեղեցկությունն այն երկրի, որ այնքան հարազատ էր իրեն: Ալեքսանդրը հիանում է այդ երկրի բացառիկ գեղեցկությամբ ու հարցնում է, թե ո՞վ է այդ երկրի թագավորը: Պատմում են, որ Բերդայի տիրակալն է մի կին՝ Նուշարե անունով, որ իր ժմաստությամբ ու արդարությամբ երկիրը միշտ բարգավաճ մինակում է պահում: Նրա ծառաները միայն կանայք են: Հրաժարված մարմնական վայելքներից՝ նա նվիրվել է միայն հպատակների բարեկեցությունն ապահովելու գործին: Թեև կին է, բայց հզ

ռազմական հղորությամբ նա անպարտելի է: Ալեքսանդրը գնում է թերդաւ: Նուշարեն ուղարկում է նրան մեծամեծ նվիրներ ու շնորհելու: Նուշարեն ուղարկում է արգարությունը, Ալեքսանդրը, կամենալով անձամբ հավորում նրա գալուստը: Ալեքսանդրը, կամենալով անձամբ տեսնել նրան ու խոսել նրա հետ, սուրճանդակի կերպարանքով ներկայանում է ամրոցը, սակայն հենց առաջին իսկ վայրիցանին նինքն իրեն մատնում է: Թափուշու սենյակը մտնելիս նա մի կատահնքն իրեն մատնում է սուրճանդակների մի քանի սուլորությունները.

Սուրճանդակը դանից ներս մտավ խիզախ,
Գեղի գահը գիմից առյուծի կեցվածքով.
Իրանին կապած սուրը ցած շդրեց,
Ինչպես որ կարգն էր սուրճանդակների:

Բացի այդ, Ալեքսանդրը խոսում է շափաղանց հանդունքն ու ինքնավստահ կերպով, որ վայել չէր սուրճանդակն: Նուշարեն հայտնում է, թե ինքը գիտի արդեն, որ ծպտյալ սուրճանդակը հենց ինքը՝ Ալեքսանդրն է և հաշտ ու իսպաղ կերպով բարեկամական ընթացք է տալիս այդ հանդիպմանը: Ուշագրավ է, այստեղ Նուշարեի հյուրասիրությունը: Նրա հրամանով ամրոցում ճոխ պատրաստություն են տեսնում, բայց հակառակ գրան, ուտեղենի փոխարեն Ալեքսանդրի առջև նա գնում է ոսկով, հակինթով, սուտակով ու մարգարիտով լցված անոթները: Ալեքսանդրը զարմացած դիմում է նրան, թե ինչո՞ւ իրեն ուստիվիթի փոխարեն թանկապին քարեկը են մատուցում, չը՝ որ նրանցով կշտանալ չի կարելի: Նուշարեն մեղմությամբ պատասխանում է: Եթե այդ քարերն արժեն չունեն, ինչո՞ւ նրանք կուտակելու համար կոիվ է մզում: Ալեքսանդրը համաձայնում է նրա գիտողությանը, որ, իրոք, հարստություն զիգելու համար շգիտք է արյուն թափել: Ակսվում է բայց հյուրասիրությունը, որից հետո Ալեքսանդրը՝ բարեկամուբուն բայցն կնքելով նրա հետ, վերադառնում է իր ճամբարը: Իր հերթին Նուշարեն էլ փոխադարձաբար այցելում է Ալեքսանդրին ու մասնակցում ճոխ խրախնանքին:

Ալեքսանդրը, վերջապես, շարունակում է իր ճանապարհ՝ այժմ նա արդեն կամենում է մի կողմից՝ ամրող աշխարհում վերացնել բռնությունն ու կեղեքումը, արդարություն հաստատել բռնուր երկրներում, մյուս կողմից՝ իմանալ, թե որտեղ են մարդիկ

առավել երշանիկ սպում: Գրավելով Դերբինդի ամրոցը և պարհապներ կանգնեցնելով նրա շուրջը՝ նա դնում է Սարիբ ամրոցն, որ պահված էին Քեյ-Խոսրովի գահն ու Զեմզիդ արքայի առասպելական աշխարհացույց գավաթը: Նա նստում է գահի վրա և ջուր խմում գավաթով, իսկ Ապոլոնը (Բուլինաս), որ ուղեկցում էր նրան, գավաթի օրինակով հորինում է առաջին աստծղաշափը (աստրոլար): Եարունակելով ճանապարհը՝ Ալեքսանդրը դիմում է դեպի Հնդկաստան: Հնդկական թագավորը Քայլը նրա նամակին պատասխանում է հարուստ նվերներով. ապա՝ նա գնում է գեղի Չինաստան և, ոչ ուժեղ ընդհարումներից հետո, հայտության դաշն կնքում շինական խաքանի հետ: Կերագարձի ճանապարհին նրա մոտ են գալիս Հայաստանի սուլթանակները և հայտնում, թե արխազ Դուվալի Ալեքսանդրի օգնությունն է խնդրում ոռուների դեմ կովելու համար, որոնք հարձակվել են Թերդայի վրա: Կիպրոսի ների ստեղներով Ալեքսանդրն զտապում է օգնության համենև գերված թագուհուն: Ռւշագրավ է այստեղ նիզամիի առանձնակի գովասանքը Կիպրակ կանաց գեղեցկության նկատմամբ: Ի վերջո Ալեքսանդրը հասնում է ուզմի դաշտ և, ծանոթանալով ոռունեկան գործերի ուժերին ու նրանց մարտունակությանը, համոզվում է, որ այնքան էլ հեշտ չեն նրանց դմբ կովելը: Ի դեպ, նիզամին մեծ դժվանանքով է խոսում ոռուների ուզմական քաջության ու խիդախության մասին, որ անշուշտ, յուր ժամանակում իսկ կատարված ոռունեկան արշավանքի թողած տափալորության արտահայտությունն է: Հայտնի է, որ 1170 թվին ոռունեկան տորմիդը Կասպից ծովսկ մտել էր Թուր գետը և սիմում էր պեսի երկրի խորքը. մյուս կողմից խաղարները հարձակվել էին Դերբինդի վրա ու գրավել այն: Երբանշահը միայն Վրաստանի թագավոր Գևորգի երրորդի օգնությամբ կարողացավ ետ մղել խաղարներին, իսկ ոռունեկան տորմիդը ոչնչացավ փոխորդի քամանակի: Բացի այդ, ոռուները հարձակվել էին Արքանի վրա նաև առաջ. օրինակ, 946—947 թվերին նրանք գրավել էին Թերդան: Այս հարձակումներից ցնցող տափալորության ազգեցությունն է եղել պատճառն անշուշտ, որ նիզամին, ժամանակադրական հայտնի խախտում կատարելով, նկարագրում է ոռուների արշավանքը Ալեքսանդրի օրոք՝ Ալեքսանդրը, բազմաթիվ տեղական ժողովուրդներին իր հետ միացնելով՝ լոթ ճակատ-

առաջարտում հաղթում է վերջապես ուստիներին և ազատում նույ-
նենին:

Ավագառելով այդ արատիրազմը՝ Ալեքսանդրն ուղևորվում է ոչ-
պի Հայկական մշուշի երկիրը, որ գտնվում էր Հյուսիսային
բնելուսահանության, այդտեղ էր գտնվում կենաց շրի-
առքարուրը, և ով խմեր այդ շրից, կանմահանարի Մեծ շարշարանք-
ների գնով նա հասնում է մշուշի երկիրը, մտնում է մշուշների մեջ
և քառասուն օրիւ որոնումներից հետո՝ լսելով խորհրդավոր մի
ձայն, որը հայտնում էր, թե միևնույն է, նրա որոնումներն ա-
պարդյուն կանցնեն, դուրս է գալիս այնտեղից ու դիմում դեպի
Հայքենքի Նիդամին պատմում է, որ անմահական ջուրը լուսատու-
քարի օգնությամբ գտել և խմել է Աւեքսանդրին ուղեկցող զինվոր
ները, որ և, որա շնորհիվ, անմահացել է: Պատմում է նաև արդ
առաջարտության վարիանուր, ըստ որի Խըզըր Իլլասի հետ
մշուշի եթերում թափառելիս պատահաբար նստել է այդ աղբյուրի
մոտ և ճաշել, այդ միջոցն աղ դրած ձուկը նրանց ճնորից ընկեր
է շրի մեջ և կենդանացել, որից և նրանք իմացել են, որ դա ան-
մահական ջրի աղբյուրն է:

վերադարձի ճանապարհին Ալեքսանդրը հասնում է մի խոր-
շաբաղավոր քաղաքի Բնակիչները պատմում են, որ երբեմն երլաւն
մուսակա լեռից մի խորհրդավոր ծայն կանչում է իրենց, բայց ով-
քեր քարձրանում են լեռը, այլև չեն վերադառնում: Ալեքսանդրը
փորձում է պարզել գաղտնիքը, բայց արդյունքի չի հասնում: Այն-
տեղ ուղարկված գինվորները նույնակես անվերադարձ կերպով
անհետանում են: Ալեքսանդրը վերադառնում է, վերջապես չուր-
հալութիւնից Դրանով էլ վերջանում է առաջին մասը:

Երկրորդ մասում հեղինակը ներկայացնում է Ալեքսանդրին
նախ և առաջ իրեն փիլիսոփա։ Վերադառնալով Ռում և կորպի
գցելով նորին դորձերը՝ նա Հոգ է տանում գիտության ու կու-
տուքայի ծաղկման մասին։ Նա հրամայում է Հովհաննի Թարդ-
մանել իր հետ բերած արժեքավոր զրքերը՝ տարբեր լիգուններից,
ապա՝ իր մոտ է Համարքում աշխարհի բոլոր իմաստուններին։ Ինքն
էլ իր հերթին հաճախ առանձնանում է իր համար կառուցված
խցում և սուղլում խորհրդածությունների մեջ։ Այս նախապատ-
րաստական գույններից հետո հեղինակը պատմում է տասը պատ-
մակածքներ, որոնց մեծ մասը բաղկած է ին Հովհաննա և Խոհ-

գովկուններից (օր. Միդաս թագավորի մասին ավանդությունը, որ վերագրված է Ալեքսանդրին, Արքիմեսի սիրո պատմությունը, Հերմոս Տիհոմեգիստի պատմությունը և այլն): Արանց հետևում է, եթե Կարելի է այսպիս ասել, փիլիսոփայական մասը: Նիզամին ներկայացնում է Ալեքսանդրին Հնդկական գիտունների հետ վարած վիճաբանության մեջ: Այնուհետև Ալեքսանդրի ներկայությամբ գիճաբանության մեջ են մտնում հոնական յոթ նշաննավոր փիլիսոփաները: Արքատունը, Ասպուն Տիհանացին, Սոկրատը, Պլատոնը, Բալեսը, Պորփիրը և Հերմեսը, թեև այս հատվածներն իրենց գեղարվեստական կատարելությամբ համեմատաբար ցածր են: Բայց շափազանց կարեոր են իրենց բովանդակությամբ: Վեճի նյութն է կազմով աշխարհի ծագման հարցը: Նիզամին, Հաջորի չնստելով ժամանակագրական տվյալների հետ, Ալեքսանդրի մոտ է բերում հոնական փիլիսոփայության տարբեր ուղղությունների ներկայացնուցիչներին և քննության առնում նրանց փիլիսոփայական հայացքները: Ցուցաբերելով իր հմտությունն ինչպես առարակ փիլիսոփայական հարցերին, այնպես էլ, առանձնապես, հոնական փիլիսոփայությանը՝ Նիզամին իր եզրակացությունը՝ հայտնում վիճարկվող հարցի նկատմամբ, այդ եզրակացությունը՝ որբանով առաջմա ուսումնասիրված է, հանգում է գնուստիկական ներպլատոնական ուղղությանը: Երջապատված փիլիսոփաններով ու գիտնականներով, սուզված խորհրդածությունների մեջ՝ Ալեքսանդրը համում է գիտության ծայրագույն գագաթներին: Բայց, առաջ, կրկին լսվում է խորհրդավոր ձայնը, որ կոչում է նրան գեպի հանապարհորդություն՝ մարդկությանը գեպի բարիքի ուղին բերելու նվա ուղերդում է: Նախ նա գնում է գեպի արեւուտք և հասնում երկրի արևմոյան սահմանին, ուր արեգակը սուզվում է օձիքանոսը: Այսուել ծիծաղեցնող թանկագին քարերով նա մի անմատելի ամրոց է կառուցում օպիտում: Այնուհետև նա դիմում է գեպի հարավ, ասկա՝ արևելք և համում է երկրի արևելյան սահմանին, որտեղ ծովը թափվում է տիեզերական օվկիանոսի մեջ: Ալեքսանդրը հրամայում է կանգնեցնել այդտեղ պղնձյա արձան՝ վեր պարզութեառուվ, իբրև նշան ծովագնացներին՝ իրենց բնթացքն այլևս շարունակելու համար: Այդտեղից վերադառնալով Զբանատան և այնտեղ միամսյա հանգիստ վայելելուց հետո՝ Ալեքսանդրը դիմում է գեպի հյուսիս: Ճանապարհին նա հանգիստ է

մի ժողովրդի, որ անրնդհատ ասպատակությունների է Հնաթարկվուա-
ամազակաբարու մի ցիվ կողմից, և կառուցում է հակալական պա-
րիսակ՝ թշնամիների հարձակումն արգելակելու համար ի մերը նա
համանում է դրախտային մի երկիր, ուր ամեն ինչ բացառապես
ըստ է: Արդասաբեր է հողը, բարենպաստ կլիման, պտուներն ու
ընթացքն առաջ, իսկ մարդիկ՝ բացարձակապես երշանիկ: Այդուղի
շկան հալածվածներ ու հալածողներ, կեներքվածներ ու կեղեքիշներ,
հարուստներ ու աղքատներ: Մարդիկ ապրում են լիակատար հա-
զամարդության ու աղատության մեջ, մեկը մյուսին իր եղբայրն է
համարում: յուրաքանչյուրը շահագրգոված է ոչ միայն իր, այլև
մյուսների աղատությամբ ու երջանկությամբ, յուրաքանչյուրն իր
պարտին է համարում օգնել ուրիշներին և, որ կարևոր է, իր եր-
շանկությունը տեսնում է մյուսների երջանկության մեջ: Դրա
շնորհիվ էլ այդ երկրում շկան իշխողներ և իշխանության ներկա-
յացուցիչներ. առանց իշխանության կողմից հաստատված օրներ-
ների էլ այդտեղ համարակությունը կառավարվում է, նույնիսկ հո-
ումքը հոմվների կարիք չունեն, որովհետև գողությունը, կողո-
ուրուսն ու ընշաբացցությունն իսպառ վերացված են: Մարդիկ
շափակոր են իրենց պահանջմունքների մեջ, աշխատասեր են և
զնամատկար հակումներից գերծ, որի շնորհիվ էլ նրանք ազատ են
հիմքանդություններից և մեռնում են խորին ծերության մեջ՝ գոյ-
իրենց կյանքից: Խնչպես Ալեքսանդրին իրենց կյանքը նկարագրող
ձեռունին է ասում, իրենց մեջ ապրել թույլ են տալիս միայն ի-
րենց նմաններին, իսկ շարերին վնասում են: Այսպես, ահա, վեր-
շապես Ալեքսանդրը գտնում է իր որոնած երջանկավետ երկիրը:
Իր ամբողջ կյանքում նա երազել էր աշդպիսի երկրի մասին ու ո-
րոնել, այժմ երբ նա արդին գտել էր այն, ցավ է հայտնում, որ շուտ
չէր եկել այդտեղ և յուրացրել նրանց կենսածեր: Բայց ուշ էր ար-
դեմ... Խորհրդավոր ձայնը կրկին կանչում է Ալեքսանդրին՝ հրա-
մայելով անմիջապես վերադառնալ: Ալեքսանդրը ճանապարհ-
վում է դեպի Ռուսիմ: Բայց Շահրազուրում հիվանդանում է: Երկա-
